№ 249 ԿԻՐԱԿԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12

1906

ԵՐԵՍՈՒՆԶՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12 № 249

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԵԿԻ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ

„ՄՇԱԿ"

Լրագիրը արժէ 2 րուբլի: Մի ամսվանը 1 րուբլի:

ՆԱՀԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՀԱՊԵՏԵԱՆՑԻ

մահվան քառասունքին, առաջիկայ կիրակի, ամսիս 12-ին, ս. պատարագից յետոյ, Վանքի մայր եկեղեցում կը կատարվի հոգեհանգիստ, որի մասին յայտարարում է

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

(ու. կ.) 2—2

Բացված է բաժանորդագրութիւն

ՀԱՅԵԼԻ

Գեղարուեստական երգիծաբանական պատկերազարդ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ,

որին աշխատակցում են նկարիչներ՝ պ.պ. Շամշինեան, Զոմմեր, Ճէպէյեան, Ռոզզեւ, «Սլաք», «Սեթառ», «Միֆասոլ» և ուրիշները:

Տարեկան բաժանորդները կը ստանան պրեմիաներ. 1) Երկու մեծադիր (50×60 սանտիմ) գունաւոր պատկեր հայկական կեանքից, 2) Պատի տախտակ, պատկերազարդ օրացոյց 1908 թ.

Տարեկան գինը պրեմիաներով Թիֆլիսում՝ 4 ր., դուրսը՝ 5 րուբ.: կէս տարին՝ 2 ր. դուրսը՝ 2 ր. 50 կոպ.: Երեք ամիսը՝ 1 ր., դուրսը 1 ր. 25 կ.: Արտասահման՝ տարեկան 6 րուբլի, կէս տարին 3 րուբլի:

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Аели», Дворцовая ул. № 3. կամ Tiflis, Rédaction du journal «Haeli».

Առաջին համարը լոյս կը տեսնի երկուշաբթի, նոյեմբերի 13-ին:

Խմբագիր-հրատարակիչ՝ Բ. Ճէպէյեան

(կ.) առ. 1—1

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալէքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. ԲՈՒԴԵՆԿՕ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.
Բժ. Ֆ. Վ. ԶՈՒԴՆՕՎՍԿԻ.—Վիրաբուժ. հի. երկ. ուրբ. 2—3 ժ.
Բժ. Մ. Ի. ԵԱՆՉԵՎՍԿԻ.—Ականջի, քթի և բկի, չորեքշ., ուրբ., կիր. 2—3 ժ.
Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ.—Վիրաբուժ., միզասեռ. երկ., չորեք., շաբ. 2—3 ժ.
Բժ. Ն. ԱՍՊԻՍՕՎ.—Քթի, բկի և ականջի, երկ., շաբ. 1—2 ժ., չորեք., կիր., 12—1 ժ.
Բժ. Վ. Գ. ԲՕԺՕՎՍԿԻ.—Ներքին հիպնօզով ամենայն օր 4—5 ժ.
Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱՁԷ.—Կաշուի, վեներ, ամենայն օր 1—2 ժ.
Բժ. Վ. Ի. ԻՆԱԵՎ.—Ներքին, ամենայն օր 1—2 ժ., ուրբաթ 3—4 ժ.
Բժ. Ա. Ա. ՄՕՆՍԷ.—Ներքին, երեխ. երկ., հինգ., շաբ. 4—5 ժ.
Բժ. Ա. Տ. ՐՕԶՄԱՐԻՆՍԿԻ.—Երեխ., հինգշ., շաբ. 11—12 ժ. երկ., ուրբ. 1—2 ժ.
Բժ. Ն. Ի. ՆԵՒՈՒՅՄԻՆ.—Աչքի, երկ., երեք., չոր., ուրբ., շաբ., 11—12 ժ.
Բժ. Ա. Ա. ՆՕՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., չոր., կիր. 12—1 ժ., երկ., ուրբ. 1—2 ժ.
Բժ. Զ. Ֆ. ՆԵՎԶՕՐՕՎԱ.—Ատամի հիւ. 11—1 ժ. ամենայն օր.
Բժ. Կ. Մ. ՊԻՎԱՐՍԿԻ } Կլինիքական անալիզ
Բժ. Կ. Ի ԶՈՒԴՆՕՎՍԿԻ }
Բժ. Գ. Իւ. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. գիմն. մասսաժ, էլէքտր. 4—6 ժամ.

Բժշկական խորհուրդներ, մասսաժ, սրսկել, անդամահատել, անալիզի ենթարկել, հիպնօզել, ատամների և ծամաների քննելը—ըստ համաձայնութեան:

առ. (կ. չ. ու.) 1—144

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ալէքսանդրօ-Նեվսկի եկեղեցուն կից.

Միքայէլեան փող. № 139, տէլէֆօն № 817.

Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից:

Բժ. Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—Ներքին հիւանդութ. երեքշաբթի և հինգ. օրերը, ցեր. 11—12 ժամը:
Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ—Ներքին հիւանդութ. շաբաթ օրերը 12—1 ժամը:
Ս. Ս. ՎԻՐՍԱԼԱՁԷ—Ներքին հիւանդութ. երկուշաբթի և ուրբաթ:
ՕՐԲԵԼԻ—Ջղային հիւանդութ. երկուշաբթի և ուրբաթ օրերը, 12—1ժամը:
Ի. Ն. ՏՈՒՄԱՆՕՎ—Կանացի հիւանդութ. երեքշաբթի և ուրբաթ 11—12 ժամը:
Մ. Պ. ՆԻՄՕՆՏ— Վիրակապութեան հիւանդութ. երկուշաբթի և հինգշաբթի օրերը 11—12 ժ.:
Ա. Ա. ՌՕԶԱՆՕՎ.—Քթի, ականջի և բկի հիւանդութիւններ, չորեքշաբթի և ուրբաթ օրերը, 11—12 ժ.:
Հիւանդանոցի կառավար. բժ. Ա. Ս. ԱԼԱԴՕՎ ներքին հիւանդութ. ամեն օր 10—11 ժամը:

(կ.) առ. 2—10

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. ՔԱԹԱՆԵԱՆ

Ընդունում է ներքին և ջղային հիւանդութիւններ ունեցողներին. առաւօտեան 9—11 ժ. երեկոյեան 5—7 ժամը:

Միքայէլեան փողոց № 27, տուն Մանթաշեանի

Տէլէֆօն № 1061.

առ. (ե. հ. շ. կ.) 8—10

ՀԱՅ ԴՐԱՄԱՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ

կը ներկայացնէ

Կիրակի, նոյեմբերի 15-ին

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԹԱՏՐՕՆՈՒՄ

ՌՈՒԻԶԱՆ

Պատմական դրամա 5 արար. և 8 պատկերով. Մուրացանի

Սկիզբը երեկոյեան ժամը ճիշտ 8-ին:

Տեղերի գները 1 ր. 20-ից մինչև 20 կոպ.:

Վարչութեան հերթապահ անդամ՝ Հ.Առաքելեան

—

Երկուշաբթի, նոյեմբերի 13 ին

ԱՐՏԻՍՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆՈՒՄ

ՏՕՍԿԱ

Դրամա 4 արար., Սարդուի, Թարգմ. Ա. Թարխանեանի

Վերջը

ԳՈՂ

Պիես 1 ար., Միրբօի, Թարգ. Վ. Փափազեանի

Սկիզբը երեկոյեան ժամը ճիշտ 8-ին:

Վարչութեան հերթապահ անդամ՝ Մ.Մուրադեան

Ռեժիսոր՝ Յ. Աբելեան

առ. 1—2

ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Երեքշաբթի, նոյեմբերի 14-ին

Հայ դրամատիկ ընկերութեան խումբը անդամների, փոխանդամների և նրանց ընտանիքների համար կը ներկայացնէ՝

ԽԱԹԱԲԱԼԱ

Կոմեդիա 4 արար. և 6 պատկ., Գ. Սունդուկեանցի:

Ներկայացման սկիզբն է ժամը 7½-ին:

ՏԵՂԵՐԻ ԳՆԵՐԸ 1 ՌՈՒԲ. ՄԻՆՉԵՒ 30 ԿՈՊ.

Հիւրերը անդամների երաշխաւորութեամբ վճարում են ամեն մի տոմսակին եւ 1. րուբ.:

Աշակերտներին մուտքը չէ թոյլատրվում:

Ռեժիսոր՝ Յ. ԱԲԷԼԵԱՆ

(կ. ե.) 1—2

ԼԱԿՏՕԲԱՑԻԼԵԱՆ ԿԱԹ

ՊՐՕՖ. ՄԵՉՆԻԿՕՎԻ

Ցուցմունքների համաձայն պատրաստվում է

ՊՐՕՎԻԶՕՐ

Ա. Ս. ԿԼԻԲԱՆՍԿՈՒ

Խիմիկօ-բակտերիօլօգիական կաբինետում, Վօրօնցովի արձանի դիմաց:

Հեռախօս № 389.

(կ.) առ. 4—10

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԹԱՏՐՕՆ

Երեքշաբթի, նոյեմբերի 14-ին

Թառայեանի նորակազմ «Էստէտիկ» խումբը կը ներկայացնէ

ԱՐՇԱԼՈՅՍ

Դրամա, 5 գործողութեամբ

(Դրամայի նիւթը վերցրած է Ստեփաննոս Նազարեանցի կեանքից)

Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ «Էստէտիկի» օրգան «Ընկերի» խմբագրատան (Գօլովինսկի, եղբ. Թառայեանցների գրավաճառանոցին կից), իսկ ներկայացման օրը՝ Թատրոնի կասսայում:

առ. 2—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դէպի Պետական Դումա. Վերջին տեղեկութիւններ. Ինչպէս մասնակցենք ընտրութիւններին. Մեզ համար միեւնոյն է. Բողոքներ. Սուտը շարունակվում է. Տեղեկութիւններ գաւառից. Կառավարչական փասեր և լուրեր. Ընտրութիւնների շուրջը. Մասնաւոր և միջնակարգ գպրոցների շուրջը. Հացը թանգացնում են. Նաւթ մուշտարիներ. Երէկոյթ Պետրոսեանի յիշատակին. Հայ-Թուրքական ընդհարումները և Բագուի բանւորութիւնը. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԴԷՊԻ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

I

Ռուսաստանը պատրաստվում է ընտրութիւններ կատարելու:

Պէտք է կազմել նոր Պետական Դումա, որ ներկայացուցիչ լինի ժողովրդի ձայնի և օրէնքներ մշակէ պետութեան համար:

Անկասկած՝ լիակատար ներկայացուցիչ լինելու համար անհրաժեշտ է, որ Պետական Դումայի անդամները ընտրված լինեն քառանդամ եղանակով: Եւ որովհետև այդ եղանակը դեռ չէ մտցրված՝ ժողովրդական ներկայացուցչութիւնը կը լինի ոչ լիովին հարազատ:

Սակայն ներկայումս անկարելի է դարձնել այդ լիազօր ներկայացուցչութեան իրագործումը և ժողովուրդը ստիպված է գործել այն թերատ ազատութեան շրջանակում, որ նրան տրված է:

Սահմանափակ է շրջանակը: Բայց և այնպէս չը պէտք է ձեռքերը ծալել, չը պէտք է գործից յետ քաշվել և անհրաժեշտ է ամեն միջոց գործ դնել, որ նոյնիսկ ներկայ աննպաստ պայմաններում ժողովրդական ձայնը չը խեղդվի և նա կարողանայ կարելիին չափ հարազատ ներկայացվել Դումայում:

II

Առաջին Դուման, որքան էլ աննպաստ հանգամանքներում կազմվեց, այնուամենայնիւ ընդունակ եղաւ իր մէջ ամփոփել ժողովրդի տենչանքներն և բողոքների ձայները: Եւ Դուման ճանաչվեց՝ իբրև ժողովրդի հարազատ ներկայացուցիչ:

Որ գլխաւոր և խոշոր իղձերը նա արտայայտեց թէ այն ուղերձ-պատասխանի մէջ, որ նա մշակեց գահական ճառի առիթով և թէ այն ճառերի մէջ, որ արտասանեցին պատգամաւորները պարլամենտական նիստերում:

Ուղերձ-պատասխանի էութիւնը և նշանակութիւնը մնում են ընդհանուր առմամբ անխախտ և անվիճելի ոչ միայն այն գործողների համար, որոնք գերիշխող դեր էին կատարում Պետական Դումայում, այսինքն ժողովրդական ազատութեան կուսակիցների, այլ և միւս պատգամաւորներից շատերի համար:

Ուղերձ-պատասխանը լիակատար ծրագիր չէր, բայց այնպիսի ամփոփումն էր, որ պարզ գաղափար էր տալիս ժողովրդական ներկայացուցչութեան առաջին պահանջների մասին:

III

Մի հիմնական պահանջ դարձել է բանաձև, որը հանդէս է գալիս՝ իբրև հրամայողական և անդրդուելի մի պահանջ:

Դա այն է, որ մինիստրութիւնը կազմված լինի Պետական Դումայի վստահութիւնը վայելող անձերից:

Եթէ Պետական Դուման օրէնսդիր մարմին է, անհրաժեշտ է, որ օրէնքներ իրագործողը կամ գործադիր իշխանութիւնը կազմված լինի այնպիսի տարրերից, որոնք գործում են ոչ թէ հակառակ ժողովրդական կամքի, այլ բոլորովին համաձայն նրա հետ:

Իսկ եթէ մինիստրութիւնը կը մնայ Պետական Դումայից բոլորովին անջատ, ոչ մի բարոյական կախում չունեցող մի մարմին, այն ժամանակ այդպիսի մինիստրութիւնը կը չքացնէ Պետական Դումայի բոլոր ծրագիրները և դիտաւորութիւնները, ինչպէս նա այդ աշխատում էր անել Գօրեմիկինի թշուառ մինիստրութեան օրով:

Մինիստրութիւն կազմելու հարցը այդպիսով ամենակարևոր ժամանակակից հարցն է, որ պէտք է առաջ մղեն Դումա գնացողները:

IV

Երբ որ ժողովուրդը բարոյական հարազատութեամբ կապված կը լինի իր ներկայացուցչութեան հետ Պետական Դումայում և վերջինս այնպիսի բարոյական ոյժով և համախոհութեամբ շաղկապված կը լինի գործող մինիստրութեան հետ, այն ժամանակ փոքր ի շատէ վստահութիւն առաջ կը գայ ժողովրդի մէջ դէպի պետութեան կարգերը և իշխանութեան հեղինակութիւնը:

Այդ բարոյական կապի հաստատման և ամրապնդման մասին պէտք է լուրջ հոգատարութիւն ունենալ և աշխատել ամեն կերպ նրան իրականացնելու պետական կեանքի մէջ:

Այդ կապը լինելուց յետոյ գործող մինիստրութիւնը կը զգայ իրան հեղինակաւոր, լաւ գիտենալով, որ նրան կռնակէ և կը պաշտպանէ Պետական Դուման, իսկ Դուման աւելի համարձակ և ուժեղ կը խօսէ, հաւատացած լինելով, որ նրան թիկունք կը տայ և կը պաշտպանէ ամբողջ ժողովուրդը:

V

Եւ ահա մեր առաջ դրված են այնպիսի խոշոր հարցեր, ինչպէս մի կողմից մինիստրութիւններ կազմելու հարցն է, միւս կողմից ժողովրդի մէջ այնպիսի գիտակցութիւն մտցնելը, որ նա կարողանայ իր անկաշառ ներկայացուցիչներին Պետական Դումա ուղարկելու, նրանց պաշտպանելու իր բարոյական աջակցութեամբ և ամեն մի նոր ընտրութեան ժամանակ քաղաքացիական արիութեամբ պատգամաւորներ ընտրելու այնպիսի անձերի, որոնք կարողանան աւելի ու աւելի մեծ ոյժով ու հեղինակութեամբ առաջ մղել ժողովրդական դատը:

Ժողովուրդը տէր ու տնօրէն իր բոլոր գործերի—պէտք է դառնայ անդրդուելի համոզմունք, արիւն ու մարմին:

Այդ է ժողովրդապետութեան պահանջը [illegible]

Իւրաքանչիւր քաղաքացի պէտք է գայ գործելու այդ ճանապարհով:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Տեղեկութիւն է ստացվել, որ անդրկովկասեան երկաթուղու Նորաշենի կայարանի մօտ մարդատար գնացքը ենթարկվել է մի մեծ աւազակախմբի յարձակման: Դէպքի ժամանակ ծանր կերպով վիրաւորվել են պահակներից 4 հոգի, երկրորդ կարգի 2 ճանապարհորդ և մեքենավարի օգնականը: Աւազակները տարել են 20,000 րուբլի: Մանրամասնութիւնները դեռ եւս յայտնի չեն:

—

Խանքենդ-ուան, 8 Նոյեմբերի

[illegible] փախչելով զանազան կողմեր, մի քանի տուն անցել էր Զանգեզուրի Խանածախ գիւղը: Սովի պատճառով այժմ այնտեղի ալիղուլեցիներն էլ փախած գալիս են Ղարաբաղի կողմերը:

Նրանցից երկու տուն եկաւ Խանքենդի: Ճանապարհին սովից և ցրտից մեռել էր մի երեխայ, իսկ մի կին էլ սառչելու վրա էր, բայց հասաւ Խանքենդ և նրան տաք ջրում դնելով կենդանացրին: Երեխան հողին յանձնվեց Խանքենդի հայերի գերեզմանատանը, իսկ նրանց ճանապարհեցին ուրիշ տեղեր, որովհետև խստիւ արգելված է Խանքենդում ալիղուլցի պահել:

Ծանր է խեղճերի վիճակը. ոչ հաց կայ և ոչ հագնելիք: Ձիւնն արդէն եկել է սարերը ծածկել

***

—

Խանքենդ-ուան, 8 Նոյեմբերի

Վարչութեան հրամանով ալիղուլեցիները դուրս արին Խանքենդուց: Թուրքերը չէին ուզում նրանց Խանքենդում մնալը և նրանց սաստ ցանկութիւնը իրագործվեց:

Նրանք դժուարութեամբ դուրս եկան Խանքենդուց և այդ ունէր իր պատճառները: Նախ ունէին ձրի բնակարաններ, աշխատանք, որով մասամբ հեշտացնում էր իրանց ընտանիքներին կերակրելը, ապա հոգևոր ձրի օրինակատարութիւններ: Ծխական Պետրոս քահանան նրանց բոլոր օրէնքները կատարում էր ձրի, ննջեցեալների համար միշտ փող էր ժողովում իր ժողովրդից և հոգում կարևոր ծախսերը, և ժողովրդին այնպէս կապել էր իր անձի հետ, որ նրանք դժուարութեամբ էին հեռանում այստեղից:

Ով գրաստ ունէր հեռացաւ, ով չունէր՝ իր երբեմն շալակած հեռացաւ, նզովելով իր օրը, ծնունդը, վիճակը:—Զարչարվում էինք բէգերի ձեռքին, մեզ կոտորեցին, կողոպտեցին, այսօր մեր յանցանքն ինչ է, որ դարձեալ հալածվում ենք,—ասում էին խեղճերը: Բայց վարչութեան վճիռը անքակտելի էր և նրանք հեռացան այսպիսի ցուրտ ձմրան օրերին, ծաղիկ հիւանդութիւնով վարակած իրանց ընտանիքները: Ո՞վ էր կանաւորված սենեակներից իջնում գաւառը տեսնելու ալիղուլեցիների տնային տեսքը, ապրուստը, անկողինները, ուտելիս հացն ու կերակուրը. ոչ ոք. բայց վճիռներն անդառնալի են և կատարվում են կուշտի և քաղցածի վերաբերեալ միատեսակ: Տակաւին գեներալ Ալիխանի ժամանակն էր հրամայված նրանց դուրս գալ Խանքենդուց, բայց նա, երբ անձամբ տեսաւ Խանքենդու զինուորական կլուբի առաջ այդ խայտառ մերկ, ցնցոտիներով իրանց մերկութիւնը ծածկած մարդկանց, խղճահարվեց և յորդորեց նրանց խաղաղ կենալ, Թուրքերին սպառնալիքներ չուղարկել և Խանքենդում մնալ: Կենդանի մեռած մարդկանց յորդորում էր խաղաղ կենալ, Թուրքերին սպառնալիքներ չուղարկել...: Ձմրան ժամանակ դուք մի քանի րոպէ կանգնեցէք հայոց եկեղեցու դրան առաջ և դիտեցէք այնտեղի աղբիւրից ջուր վերցնողներին: Ձեր աչքին խփում կերևան ստաբականները, աղքատները, անկարողները: Նրանք տառապեալ են, մերկ, ձեռները դողդողում են. մինչ կուժը լցվելը նրանք քանիցս իրանց տաք շնչով ջերմացնում են իրանց սառած ձեռքերը, ոտները վար ու վեր են բարձրացնում, սառուցը իր գործն է տեսնում և այս մեռած մարդկանց, տնանկ աղքատներին հեռացնում են ով գիտէ թէ ուր, մատնում են սովի ճիրաններին: Նոյն կլուբի առաջ կովկասեան Փոխարքայի օգնական գեներալ Մալաման էլ երբ Խանքենդու ծխատէր Պետրոս քահանայից լսեց իր առաջ կանգնած ալիղուլեցիների դրութիւնը, խոստացաւ նրանց խնդիրքին բաւականութիւն տալ, այն է թողնել Խանքենդում և նրանց հող տալ: Բայց ժամանակի ընթացքում փոխվեց ամեն բան. տկար ալիղուլեցիները դարձան երևակայական հզօր առիւծներ, որ կարող էին պատառ-պատառ անել անմեղ գառ ձևացած Թուրքերին, և նրանց հեռացումն [illegible]...:

***

—

Թէհրան, 10 նոյեմբերի: Ազգային ժողովի երէկվայ նիստում ֆինանսների մինիստրը առաջարկել է օտար երկրներից մէկում փոխառութիւն կնքել: Պատգամաւորների մի մասը եռանդով բողոքել է դրա դէմ, պատճառաբանելով, որ մեծ պետութիւններից մէկի պահանջած երաշխաւորութիւնները վտանգաւոր են Պարսկաստանի անկախութեան համար: Պարսկական ազգային բանկը պէտք է անպատճառ արտաքին փոխառութիւն կնքէ. զօրքերը ռոճիկ չեն ստացել կէս տարվայ համար, դիպլոմատները ամբողջ տարվանը, պաշտօնեաները և կենսաթոշակ ստացողները նոյնպէս:

(«Հեռ. Գործ.»)

ԻՆՉՊԷՍ ՄԱՍՆԱԿՑԵՆՔ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

III

Մենք ասացինք և, յոյս ունենք, կարողացանք համոզել, որ Պետական Դումայի առաջիկայ ընտրութիւններին հայ ժողովուրդը Ռուսաստանում պէտք է միանայ «ժողովրդական ազատութիւն» կուսակցութեան հետ և յարէ նրա ծրագրին, որովհետև այդ ծրագիրը առ այժմ միակն է, որ գոհացումն է տալիս հայերի քաղաքացիական և ազգային իղձերին ու պահանջներին: Ի հարկէ մեր խօսքը այդ ծրագրի սկզբունքային կէտերի, և ոչ մանրամասնութիւնների մասին է:

Սակայն մենք բաղխելու ենք մի դժուարութեան, որ պէտք է ի նկատի ունենանք և որոշենք մեր յարաբերութիւնը և անելիքը այդ դժուարութեան հանդէպ:

Ներկայ ընտրութիւնների ժամանակ հանդէս է եկել և եռանդով գործում է «Հ. Յ. Դաշնակցութիւն» կոչված կազմակերպութիւնը, որը, ինչպէս գիտենք, նպատակին հասնելու համար միջոցների մէջ խտրութիւն դնել չը գիտէ: Նրա նպատակն է, անտարակոյս, որ Պետական Դումայի հայ ժողովրդի կողմից ընտրվելի ներկայացուցիչները լինեն Դաշնակցութիւն կուսակցութեան պատկանող անձինք, որպէսզի հայ ժողովուրդը Ռուսաստանում նկատվի դաշնակցական՝ իր մեծամասնութեամբ: Այդ նպատակին հասնելու համար դաշնակցական խումբապետները ոչ մի միջոցի առաջ կանգ չեն առնելու և գործ են դնելու դաշնակցական բիւրօկրատիայի մէջ սովորական դարձած բոլոր անգոսնելի միջոցները:

Եւ ահա մի մեծ անպատեհութիւն, որ կանգնած է մեր առաջ և որի դէմը պէտք է վաղօրօք առնենք. որովհետև եթէ հայ ժողովրդի կողմից իբրև ներկայացուցիչներ Պետական Դումա գնան դաշնակցականներ, սխալ ներկայացված պէտք է լինեն հայերի քաղաքացիական—քաղաքական և ազգային շահերը:Ժողովրդի համար խայտառակութիւն պէտք է լինի:

Բացատրենք մեր միտքը: Անցեալ տարի, երբ Ռուսաստանի բոլոր ազգութիւնները մեծ ոգևորութեամբ, եռանդով և յոյսերով փարեցին համապետական առաջին պարլամենտի գաղափարին և մասնակցեցին ընտրութիւններին, հայ ժողովուրդն եւս, ի դէմս իր լաւագոյն և առաջաւոր մասերի, կամեցաւ նոյնպէս մասնակցել ընտրական գործին և իր ներկայացուցիչներն եւս ուղարկել Պետական Դումա: Եւ մինչ ռուսաց նոյնիսկ ծայրայեղ և յեղափոխական կուսակցութիւնները որոշեցին մասնակցել Դումայի ընտրութիւններին, Դաշնակցութիւնը ասպարէզ նետվեց այդ ընտրութիւնների մասնակցութեան դէմ իր հռչակաւոր բոյկոտով: Թղթիկ Դաշնակցութիւնը բոյկոտ հրատարակեց համապետական Դումայի դէմ, այն հաստատութեան դէմ, որ կոչված էր վերանորոգելու մեր ամբողջ կեանքը: Եւ, տէր իմ Աստուած, ինչ մեղադրանքներ ասես չէին թափվում մեր գլխին, այսինքն այն հայերի գլխին, որոնք քարոզում էին թէ «Մշակի» մէջ և թէ հրապարակական դասախօսութիւնների մէջ Պետական Դումային մասնակցելու անհրաժեշտութիւնը: Մեզ մեղադրում էին, մեզ նոյնիսկ դաւաճաններ էին անուանում նրա համար, որ մենք որպէս թէ մեր այդ քարոզով՝ մասնակցել Պետական Դումային, մթնացնում ենք ժողովրդական մասսայի գիտակցութիւնը, փչացնում ենք նրա շահերը: Եւ, թէ իրանց օրգան «Յառաջ»-ում, թէ դասախօսութիւններով Դաշնակցութեան վարիչները փրփրած բերանով մի գլուխ գոռում գոչում էին, թէ Պետական Դուման կաղէտ է, թէ ընտրութիւններին չը պէտք է մասնակցել, որովհետև նրանք չեն կատարվում քառանդամ ֆօրմուլայով, և թէ մանաւանդ հայ ժողովուրդը չը պէտք է մասնակցէ այդ ընտրութիւններին: Եւ երբ մենք հակառակն էինք պնդում, նրանք ծաղրում էին մեզ. «Դուք բուրժուաներ, դուք կառավարութեան և բիւրօկրատիայի պաշտպաններ, դուք տաղտուկ մօնօպօլիստներ, դուք պաշտպանում էք միայն կապիտալիստների և կառավարութեան շահերը, քարոզելով մասնակցել մի Դումայի, որ երբեք չէ կարող համարվել ժողովրդի իսկական ներկայացուցիչ»:

Ես դեռ չեմ մոռացել այն սաստիկ յարձակումը, որ Հաւլաբարի Թատրօնում իմ և Ա. [illegible] ժամանակ գործեց Դաշնակցութեան խումբանապետներից մինը, տխրահռչակ Խաժակը: Երբ Խատիսեան բացատրում էր «ժողովրդական ազատութեան» կուսակցութեան ծրագիրը և յորդոր էր կարդում հայ ժողովրդին անպատճառ մասնակցել ընտրութիւններին, այդ խումբանապետը կատաղած, փրփրած, վեր թռաւ աթոռից և պահանջեց, որ Խատիսեանը լռէ, դադարեցնէ իր փարիսեցիութիւնը, որովհետև եթէ նա ժողովրդի շահերն է պաշտպանում, նա չը պէտք է համարձակվի խորհուրդ տալ ժողովրդին՝ մասնակցել Պետական Դումայի ընտրութիւններին:

Դաշնակցութեան այդ որոշումը՝ բոյկոտ հրատարակել Դումային մենք հռչակեցինք անցեալ տարի քաղաքական խորին տխմարութիւն, անմտութիւն ու ապիկարութիւն նրա վարիչների կողմից: Եւ դրանով մենք գրգռեցինք մեր դէմ այդ վարիչների խորին գայրոյթը: Նրանցից մինը մեզ յայտնեց. «Դուք թոյլ էք տալիս մեզ ապիկար անուանել. ապիկարը դուք էք. մեր բոյկոտը Պետական Դումայի դէմ քաղաքական խորագոյն իմաստութիւն է և հեռատեսութիւն»:

Եւ այժմ, այժմ... կատարեալ կերպարանափոխութիւն:

Այժմ դաշնակցականները պատրաստ են դաւաճան անուանել նրանց, որոնք չեն մասնակցում ընտրութիւններին: Այժմ Պետական Դումայի ընտրութիւններին չը մասնակցողը դաւաճան է հռչակվում նրանց կողմից, անհեռատես, չը նայելով որ ընտրութեան պայմանները այժմ աւելի աննպաստաւոր են, քան անցեալ անգամ, որովհետև այժմ բանւորների և գիւղացիների մի մասը զրկված է ընտրութեան մասնակցելու իրաւունքից: Ուրեմն, եթէ անցեալ անգամ Պետական Դուման, որի ընտրութեան մասնակցում էին աւելի մեծ թւով դեմօկրատիկ մասսաներ, պարօդիա հռչակվեց դաշնակցականների կողմից, ես առաւել այսօր, երբ ընտրութեան պայմանները աւելի սահմանափակ և անդեմօկրատական են, նա, ըստ դաշնակցական լօգիկայի, պէտք է համարվի պարօդիա: Եւ սակայն Դաշնակցութիւնը այդ ամենը մոռացել է և այսօր ամեն միջոց գործ է դնում, որպէսզի դաշնակցականները մասնակցեն ընտրութիւններին:

Պարզ է, որ այստեղ ոչ մի գաղափար և պրինցիպ չը կայ, որովհետև այն, որ երէկ հրատարակվում էր ծաղրելի, անպէտք, այսօր արդէն դառնում է օգտակար և անհրաժեշտ:

Երէկվայ թքածը այսօր յետ է լիզվում: Երէկվայ անբարոյական հրատարակվածը այսօր բարոյական է հրատարակվում:

Մենք չենք խօսում դեռ այն մասին, թէ որքան իրաւունք կայ Դաշնակցութեան կողմից՝ այն միջոցները, որ ժողովուրդը տուել է նրան միայն ինքնապաշտպանութեան գործի համար, գործադրել թաֆայական ագիտացիայի համար:

Արձանագրելով առայժմ այն փաստը, որ Դաշնակցութիւնը զուրկ է որևէ սկզբունքից, որ նա չունի մի որոշ ծրագիր, ուղղութիւն, որ նա երէկվայ իր թքածը կարող է լիզել, որ, հետևաբար, նա շատ հեշտութեամբ կարող է ծայրայեղութիւնից անցնել չափաւորութեան, պահպանողականութեան, նոյնիսկ յետամնացութեան, որ նա այժմ եթէ կայացրել է որոշումն մասնակցել Պետական Դումայի ընտրութիւններին, ոչ թէ նրա համար, որ ժողովրդի շահերն է կամենում պաշտպանել, ոչ, այլ միայն նրա համար, որ մի քիչ բարձրացնէ իր վայր ընկած համբաւը և անունը—մենք յաջորդ անգամ ցոյց կը տանք, թէ ինչու հայ ժողովրդի համար անպատուութիւն, խայտառակութիւն է և ժողովրդական շահերի վտանգումն, եթէ հայ ժողովրդի ներկայացուցիչներ ընտրվեն Դաշնակցութեան կուսակիցներից:

Հ. Առաքելեան

ՄԵԶ ՀԱՄԱՐ ՄԻԵՒՆՈՅՆ Է

«Երկիրը» ոմն Խատրեանի բերանով (№ 35) էջմիածնում կատարված բիրտ և տմարդի բռնութիւնը կամենում է այժմ արդարացնել մի նոր սոփեստութեամբ, թէ իբր այդ բռնութիւնը կապ ունի և այն հանգամանքի հետ, որ Սուքիաս և իր համախոհները կամեցել են խափանել Արիստակէս Սեդրակեանի թեկնածութիւնը Սինօդի անդամի և տեղապահութեան համար։

Նախ, ամենքին յայտնի է եղել, ուրեմն և Սուքիաս եպիսկոպոսին, որ առաջարկված ցուցակի մէջ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանի անունը չէ եղել։ Երկրորդ, ընդունենք մի րոպէ, որ նրա անունը եղել է ցուցակի մէջ։ Միթէ դա իրաւունք է տալիս բռնութեան այնպիսի քստմնելի ակտ կատարել։ Ոչ թէ Արիստակէս Սեդրակեանի, այլ եթէ Յիսուս Նազովրեցու անունն անգամ մտցրված լինէր ցուցակի մէջ և Սուքիասը հակառակած լինէր այդ ցուցակին, դարձեալ դա ոչ ոքի իրաւունք չէր տալիս վանդալական բռնութիւն գործ դնել։ Սուքիասին կարելի էր այլ կերպ պատժել, այլ կերպ պախարակել։

Զուր տեղ էք շահագործում հիւանդ Արիստակէս Սեդրակեանի անունը, բռնութեան խայտառակ ասպետներ, այն Արիստակէսի, որին դուք անցեալներս դաւաճան հռչակեցիք այն ժամանակ, երբ Սուքիասին և Կարապետին երկինք էիք բարձրացնում։

Ձեր կեղտոտ ձեռքերով մի ժամեցէք հայ եկեղեցականութեան այսօրվայ իսկ արժանաւոր և համակրելի դէմքին և նրան մի խառնէք ձեր ստոր ինտրիգների մէջ։

ԲՈՂՈՔՆԵՐ

Ես ևս ի բոլոր սրտէ, ամենայն զզուանքով բողոքում եմ Սուքիաս արքեպիսկոպոսին հասցրած այն անլուր և սարսափելի անարգանքի դէմ։ Թէև մասնաւոր խօսակցութեան մէջ շատ ու շատ պատուաւոր և հասկացող մարդիկ յայտնում են իրանց զայրոյթը և բողոքը այդ անցքի մասին, բայց ես լիազօրութիւն չունեմ, չեմ էլ կամենում նրանց կողմից ևս բողոքելու. թող ամեն մարդ ինչ որ զգում է, այն արտայայտէ լրագրի մէջ. այսպիսի դէպքերում լռելը յանցանք է, եթէ գիտենք, որ յանցանքը գործված է, անարգողը, գործողը պիտի ենթարկվի խիստ ու անաչառ քննութեան և յանցաւորը պիտի պատժվի։ Ես գիտեմ, որ հակառակ կողմը իմ բողոքը կը ծածկէ ծիծաղի, արհամարհանաց և ծանր ժպիտների տարափով, ինչպէս նրանց կամակատարները թուքի տարափով ծածկեցին մի ծերունու վեղարն ու վերարկուն, բայց հոգ չէ, լաւ է հրապարակով յայտնել այն՝ ինչ որ զգում ես, քան թէ լինել կեղծաւոր ու շողոքորթ, կամ լուռ հանդիսատես անգութ և զարհուրելի արարմանց։

Ասատուր Իսահակեան

Ալէքսանդրապօլ

—

(Հեռագրով)

Խնդրում եմ միացնել և իմ ձայնը «Հասարակաց դատաստանին» վերնագրով հրատարակված բողոքին («Մշակ» № 243)։

Երդուեալ հաւատարմատար՝
Ջաւադ-բէկ Բալուղեան

Արմաւիր

—

Գանձակ, նոյեմբերի 10-ին

Թոյլ տուէք ձեր լրագրի միջոցով մեր ձայնը ևս աւելացնել այն բողոքին, որը արտայայտվեց էջմիածնում կատարված զզուելի դէպքի առիթով։

Խուժանին դժուարանում ենք մեղադրել նրա զազրելի բռնութեան համար. ինքը մեծ բարոյագէտը ասաց իրան տանջող ամբոխի մասին. «Տէր, ներիր դրանց, որովհետև չը գիտեն՝ ինչ են գործում»։ Դատապարտելի են այն մարդիկ, որոնք, խիղճն ու ամօթը կորցրած, իրանք իրանց տէր ու տնօրէն են հրատարակել հայ ժողովրդի գլխին ու իրանց մութ նպատակներին հասնելու համար դարձրել են անկիրթ ու անզուսպ խուժանը մի գործիք, մի խաղալիք իրանց ձեռքում։

Սուքիաս արքեպիսկոպոսի դէմ գործ դրած մարդկային արժանապատուութիւնը ստորացնող բռնութիւնը մի արատ կը լինի հայ հասարակութեան համար, եթէ այդ հասարակութիւնը իր դատապարտելի անտարբերութեամբ անընդունակ կը հանդիսանայ իր իրաւունքները պաշտպանելու ուզուրպացիայի դէմ։

Հարկաւոր է անյապաղ ու անաչառ քննութիւն հայ հասարակութեան կողմից թէ էջմիածնում կատարված մասնաւոր դէպքը և թէ առհասարակ այնտեղ տիրող կարգերը ու մթնոլորտը լուսաբանելու համար։

Բժշկապետ Գ. Մելիք-Բէգլարեան, 2) Իսահակ Խօջայեան, 3) Բժշկապետ Գրիգոր Տէր-Մկրտչեան Տէր-Գրիգորեան (Թիֆլիսեցի), 4) Յ. Մալիեանց, 5) Միքայէլ Լազարեան, 6) Լևոն Մելիք-Մնացականեան, 7) Գաբրիէլ Սարդարեան, 8) Մ. Լիսիցեան, 9) Ե. Նաբաթեան, 10) Յովս. Խօջայեան, 11) Լ. Լաչինեան, 12) Մովսէս Մելքոնեան, 13) Միք. Խօջայեան, 14) Գր. Ենգիբարեան, 15) Ալ. Մելիքեան, 16) Տ. Մելիք-Շահնազարեան, 17) Մանուչար Մելիք-Սահփանեան, 18) Հայկազ Մելիք-Հայկազեան։

—

Բագու, 9 նոյեմբերի

Միանում եմ պ. Վերմիշեանի և ուրիշների «Մշակում» արած կոչին, որ էջմիածնում հոկտեմբերի 29-ին կատարած քստմնելի բռնութիւնների և նրանց շարժառիթների համար նշանակվի խիստ և անաչառ քննութիւն։

Յարգանօք՝ Շ. Իսահակեան։

—

Արմաւիրից էջմիածին է ուղարկված հետևեալ հեռագիրը.

Էջմիածին.

Արքեպիսկոպոս Պարզեանին

Բարեհաճեցէք ընդունել, ձերդ բարձր սրբազնութիւն, իմ որդիական ցաւակցութիւնը այն վայրենի վարմունքի առիթով ձեր դէմ ամբոխի կողմից, որին ղեկավարում էին սանձարձակ խուժանապետները՝ զուրկ որևէ սրբութեան զգացմունքից։

Անսասան, փառահեղ պարիսպները հինաւուրց ազգի դարաւոր սրբավայրի կարողացան դիմանալ բարբարոս ազգերի արհաւրալից արշաւանքներին։ Այդ պարիսպները կը դիմանան և հայրենի գաճաճների անպատկառ յարձակումներին։ Հաւատացէք, սրբազան հայր, որ առողջ հասարակական կարծիքը խորապէս վրդովված է բռնութիւն գործադրողների դէմ և նրանց մեխում է անարգանքի սիւնին։ Հասարակական կարծիքը ձեր կողմն է։

Երդուեալ հաւատարմատար՝
Ջաւադ-բէկ Բալուղեան

ՍՈՒՏԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Էջմիածնում կատարված լրբութիւնը ցնցել է հայ հասարակութիւնը. բողոքները շատանում են. դեռ տաճկահայերի և պարսկահայերի կողմից սպասվում են աւելի լուրջ առաջարկութիւններ. կառավարութիւնն էլ բոլորովին իրաւացի կերպով միջամտել է այս խայտառակ իրողութիւնը քննելու։ Տեսնելով, որ խրվել են մի անելանելի ցեխի մէջ՝ մեր բաշիբուզուկները աւելի և աւելի խորն են մըտնում, որ կատարեալ լինի իրանց կործանումը։ «Երկիր» լրագիրը իր № 35-ի մէջ մի թղթակցութիւն է տպագրել, որի հեղինակը կամենում է այդ արարմունքը կապել սրբազան Արիստակէս Սեդրակեանի անուան հետ, հաւատացնելով, որ իբր Սուքիաս եպիսկոպոսը և Կարապետ վարդապետը կամեցել են ծրարը պօստից յետ բերել տալու, որովհետև կարծել են թէ գեր. Արիստակէս եպիսկոպոսը առաջարկված է եղել սինօդի անդամութեան և տեղակալութեան պաշտօնի համար։ Այդ սուտը հնարում են, որ ժողովրդի առաջ որ և է արդարացում գտնեն, այսինքն կամենում են շահագործել մի համակրելի անուն։ Յայտնի է նախ, որ գեր. Արիստակէս սրբազանը տեղակալ է և ոչ մի կերպ նրան չէին կարող որ և է պաշտօնի առաջարկել առանց նրա համաձայնութեան, որ իրբեք տեղի չէր կարող ունենալ։ Երկրորդ՝ հազիւ թէ վեհարանից այս տեսակ առաջարկութիւն դուրս գար Խրիմեան Մկրտիչ կաթողիկոսի օրով, որ նոյնպէս յայտնի է էջմիածնի գործերին տեղեակ մարդկանց. ուրեմն էլ ինչու են կապում Արիստակէս եպիսկոպոսի անունը այս խայտա[illegible]դիկ բռնվել են կատարած խարդախութեան մէջ և գլուխները կորցրած արդարացումներ են փնտռում։ Ահա մի փոքր ի շատէ յայտնի անուն կայ հրապարակի վրա, ուրեմն պէտք է շահագործել այդ անունը, թէկուզ դրանով նոյն իսկ խաւարելու լինի այդ համակրելի անունը։ Երրորդ՝ հայ Կիւրեղ վարդապետի նամակից, որ լոյս տեսաւ «Մշակում», պարզ է, որ դեռ ծրարը պօստից չը բերած յայտնի էր թէ ովքեր են առաջարկված սինօդի անդամներ. ուրեմն էլ ինչ գործ ունի այստեղ Սեդրակեան արքեպիսկոպոսի անունը և տեղակալութիւնը։ Չէ, պարոններ, այլևս ոչ մի ֆօկուսնիկութիւն չէ կարող փրկել ձեզ ժողովրդի արդար դատաստանից, որպէս և պետական քննութիւնից, որ դուք ինքներդ առաջ բերիք. իսկ պետական միջամտութիւնը ձեր ցանկացած բանն է, որովհետև, ով գիտէ, գուցէ հանգամանքները բարդվում [illegible] լինեն և դուք կարողանաք օգտվել հանգամանքներից։

Ձեր հնարած վերջին սուտն էլ Արիստակէս սրբազանի մասին երևի շուտով կը պարզվի և այն ժամանակ դուք ի հարկէ վեհանձնաբար կը լռէք այս մասին և վերջին փրկութիւնը այն կը լինի, որ յայտարարէք, թէ մատնիչ և դաւաճան «Մշակի» անունը այլ ևս չէք կարող յիշել ձեր երևելի թերթում, որը («Մշակը») ոչ մի սպանութեան, բռնութեան, աֆէրիստութեան և սուտ տեղեկութիւններ հնարելու գործին համակրող չէ և պաշտպանում է միայն մտքի և խօսքի ազատութիւն, անձնաւորութեան անձեռնմխելիութիւն, եղբայրութիւն, հաւասարութիւն և ազատութիւն։

Ընթերցող

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Խաչէն, նոյեմբերի 14-ին։ Երեք ամիս սրանից առաջ, երբ Շուշի-Գանձակ ճանապարհի հարցն էր դրված հրապարակում, այդ ժամանակ՝ դաշնակցական, իդէալիզմի մէջ խորասուզված սէկցիականները աջ ու ձախ շռայլում էին խօսքեր, որ անհրաժեշտ և կարևոր ու առաջնակարգ հարցերից մէկն է՝ Շուշի-Գանձակ ճանապարհը։ Եւ իրանց ճառաճառ ճառերով ուզում էին ժողովրդին ցոյց տալ, որ իրանք իբր թէ գործում են յանուն ժողովրդի, յանուն գաղափարի։ Այդ իդէալիստ-սէկցիականները իրանց մեծահռչակ ճառերի մէջ ասում էին, որ գիւղացին դուրս կը գայ բանելու օրական 20—25 կոպէկով և նոյն իսկ հակառակ դէպքում առանց կոպէկի։

Անցնում են ամբողջ երեք ամիս և ահա գործը գլուխ եկած և ճանապարհը կանոնաւոր ընթացք ստացած շինվում է։

Եւ դաշնակցականները մտածում են՝ ինչու մի այս տեսակ հասարակական ու ժողովրդին օգտաւէտ գործ մեր ձեռքին չը լինի, և ինչպէս կարելի է, որ մեզանից անկախ լինի, մեր մատը մէջը չը լինի, և այդ գործի գլուխ անցածները մեզ չը խոնարհեն ու մեր օգնութեան չը դիմեն. ինչու նրանք, առանց մեզ, գործը կարողանան առաջ տանել։

Եւ ահա մի փառաւոր օր, ինչ որ Ս. Մ.*) ինքնակոչ պատգամաւոր, (ինքնակոչ եմ ասում, որովհետև նրան ժողովուրդը չէ ընտրել) էջմիածնից վերադառնալիս, իր համար գործելու նոր ասպարէզ գտնելով. սկսում է՝

«Ժողովուրդ, դուք ձեր ձեռքով ձեր տունն էք քանդում, (ասում է պատգամաւորը բանւոր ժողովրդին). ձեր ինչ բանին է ճանապարհը, դուք այս ճանապարհը շինում էք շուշեցի հասարակութեան համար, և ահա երբ դուք ուժասպառ եղած կընկնէք ձեր [illegible], այդ իսկ րոպէին, հասարակ շուշեցին, գնդգնդացող կառքերով կը գայ ու կերթայ [illegible] ը մենք ենք, և երբ նրանք ձեզ օրական կը տան 50 կոպէկ, այն ժամանակ դուք բանեցէք, իսկ եթէ չեն տալ կամ պակաս կը տան, չը բանէք. լսո՞ւմ էք»։

Եւ ինչ էք կարծում, ընթերցող, պրօպագանդան աջողութիւն է ունենում և ամբողջ երկու օր ամբողջ գծի վրա հազարաւոր մարդիկ չեն բանում։ Երկու օրից յետոյ ժողովուրդը բանը իմանալով թէ ինչումն է՝ դուրս է գալիս բանելու, անիծելով երկու օրվայ աշխատանքից զրկողին։

Ի՞նչ կայ հեշտ՝ քան շինածը քանդելը։ Բայց ամօթ նրանց, ովքեր շինած գործը կը քանդեն։

Ընթերցողը անշուշտ կերևակայէ թէ ինչ տեսակի ու տիպարի մարդիկ են։ Մի ժամանակ ինչ էին ճռճռում, իսկ այժմ ինչ են կռկռում։

Դեռ սրանց կռկռոցը բաւական չէ, կառավարութիւնն էլ մի կողմից է սկսել խանգարել։ Հրաշալի զուգադիպութիւն։

Տ.

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՒ ԼՈՒՐԵՐ

—Ոչ նահանգապետների կարծիքները այն հետևանքների մասին, որ կարելի է սպասել Պետական Դումայի ընտրութիւններից, ոչ կառավարութեանը աջակցութիւն ցոյց տւող հասարակական գործիչների տրտունջները, ոչ էլ այն դժուարութիւնները, վերջապէս, որոնց հանդիպում է փոխառութեան խնդիրը,—չեն կարողանում խախտել պրեմիէր Ստոլիպինի այն անյողդողդ համոզմունքը, որ «յեղափոխական տենդը բոլորովին անցել է և երկիրը կարօտ է հանգստութեան և խաղաղ բարենորոգումների, որ ժողովրդի համար նշանակութիւն չունի թէ ումից նա կը ստանայ իր այդ պահանջը՝ կառավարութիւնից Դումայի հետ միասին, թէ կառավարութիւնից առանց Դումայի»։

Բայց և այնպէս ներկայումս դէպի Ստոլիպինի կաբինետը և մանաւանդ դէպի իրան արդէն պարզ—թշնամական տրամադրութիւն է նկատվում այն ազդեցիկ շրջանների կողմից, որոնց միայն նա պարտական է իր բարձրանալու համար։

Այդ շրջանները չեն կարող և չեն ուզում ներել Ստոլիպինին այն բանը, որ ամեն մի [illegible] թիւն է պատճառում «իրանց ընտանիքի» այն անդամներին, որոնք, ինչպէս օրինակ Ն. Հերբարդ, կոմս Վորոնցով-Դաշկովը և այլն, շարունակ պնդում էին, որ «կաբինետի ընտրած ճանապարհը Ռուսաստանին հանգստութիւն չէ բերելու, այլ միայն յետաձգելու է կատաստրոֆը՝ դարձնելով նրան աւելի ևս սարսափելի»…

Այդ տրամադրութիւնը բնորոշ կերպով արտայայտել է մի գեներալ-ադիւտանտ. «Միայն այսպիսի անհասկանալի օրերում, ինչպիսին մերն է, կարող է այնպէս ստեղծվել կարիէրան և պետական մարդու հռչակը, ինչպէս որ դա եղաւ Պետր Արկադիեվիչի համար… Մի նահանգապետ, որին յանձնված նահանգը, համարեա թէ, առաջինն էր հրդեհված դաստակերտների թւական բազմութեամբ, մի ինչ որ թիւրիմացութեան շնորհիւ ստանում է «վճռական և նախաձեռնող» ընդունակութիւններ ունեցող մարդու համբաւ և միանգամից էլ ստանում է ներքին գործերի մինիստրի պաշտօնը… Հէնց միայն նրանից, թէ ինչ աջողութեամբ նա յետ էր մղում Դումայի ձախակողմեանների յարձակումը, արդարև, կարելի էր եզրակացնել նրա վճռականութեան մասին։ Իսկ այնուհետև՞։ Այնուհետև մեզ և այրում են, և սպանում, և կողոպտում։ Ամեն մարդ, ինչպիսի պահպանութեան տակ էլ նա գտնվելու լինի, գտնվում է ամեն մի րոպէ օդի մէջ թռչելու վտանգի ներքոյ… Եթէ, «այնպիսի լիազօր իրաւունքներով», ինչպիսին որ տրված է Ստոլիպինին, Ռուսաստանում անկարելի կը լինի վերականգնել խաղաղութիւնը և կարգը, այն ժամանակ պէտք է կարծել, որ դրա համար կամ հարկաւոր է, բացի անվեհերութիւնից, ընդունակութիւն ևս, կամ թէ հարկաւոր է վերջնականապէս հաւաքել իբեղէնները և ընդմիշտ մնաս բարեաւ ասել Ռուսաստանին…

Ստոլիպինին մեղադրում են և նրա համար, որ նա մինչև օրս էլ հոգ չէ տանում վերակազմելու գաւառական ադմինիստրացիայի կազմը և բարեփոխելու ոստիկանութիւնը։

Շրջանների կարծիքով փոխառութեան հարցը աջողութիւն չունենալու պատճառներից մէկն էլ երկրի մէջ անընդհատ շարունակվող տերրորիստական ակտերն են և խլրտումները, որոնք վկայում են օտարերկրացիներին մեր կառավարութեան եթէ ոչ թուլութիւնը, գոնէ անընդունակութիւնը մաքառելու տերրորների դէմ. ապա ուրեմն օտարերկրացիների երկիւղը չէ փարատվում, որ կրիտիկական րոպէներում, եթէ որ Դուման հրաժարվելու լինի ընդունել արտաքին փոխառութիւնը, քայքայված կառավարութիւնը անկարող կը լինի պաշտպանել այդ հարցը։ Ուշադրութեան արժանի է և այն հանգամանքը, որ «բարեբար ռեֆորմները» ոչ մի տպաւորութիւն չեն թողնում ազգաբնակութեան վրա. ոչ շնորհակալութիւն է յայտնում նա և ոչ էլ ապացոյցներ տալիս, որ փոխել է իր ունեցած տեսակէտը կառավարութեան վերաբերմամբ, ոչ էլ հաւատում է, որ նա հոգ է տանում երկրի բարօրութեան մասին։

Այդ բարենորոգումները անպէտ ծախքեր են կլանել, մինչդեռ անկարելի է հաւատալ, որ տասնեակ միլլիոններ ապարդիւն չեն կորել, քամուն չեն յանձնվել։ Այդ հանգամանքի վրա մանաւանդ շատ են մատնացոյց անում զինւորական շրջանները, որոնք վաղուց արդէն անհրաժեշտ են համարում եղած կանխիկ գումարները գործադրել ցամաքային և ծովային զօրքի սպառազինութեան վրա։

Կաբինետի ընդունած քաղաքականութեան ամլութիւնից առաջացած հիասթափութիւնը ստեղծում է դժուար կացութիւն և Ստոլիպինին փոխելու հարցը կրկնվում է հետզհետէ աւելի ու աւելի զօրեղ։ Այդ հոսանքը աւելի [illegible]

Այնուամենայնիւ, այդպիսի պայմաններում անգամ Ստոլիպինի դրութիւնը դեռևս բոլորովին կրիտիկական չէ, որովհետև կայ մի զօրեղ խմբակ, որը պահանջում է թոյլ տալ նրան «գործը» մինչև վերջ տանելու, այսինքն, ինչպէս շրջաններում են ասում, «աշխատանքի ընդունակ» Դումա գումարելու, թէկուզ դրա համար հարկ լինի երրորդ Դումայի անգամ սպասել։

Ինքը Ստոլիպինը հիպնօզացնում է ազդեցիկ շրջանները իր հաւաստիացումներով, որ «ազգաբնակութիւնը բաւականին դէպի աջ է թեքվել, և որ առողջ տարրերի յաղթանակը շատ էլ հեռու չէ»։

Նրան աջակցում են շատ գործիչներ, որոնք, իբրև թէ իրանցից, անկախ պրեմիէրից, շրջաններում քարոզում են միևնոյն հայեացքները…»

«Страна»

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Պարզաբանելով վրացերէն «Ցալգա» լրագրի բացարձակ առաջարկութիւնը, որպէսզի սօց.-դեմօկրատները Կովկասում Պետական Դումայի առաջիկայ ընտրութիւններին ոչ մի համաձայնութիւն չը կայացնեն միւս ձախակողմեան կուսակցութիւնների հետ, վրացերէն «Մեգօբարի» լրագիրը նկատում է. «Եթէ մեր սօց.-դեմօկրատները կը հետևեն «Ցալգա» լրագրում յիշված տակտիկային, կարծում ենք, որ նրանք խոշոր սխալ կը գործեն և կը վնասեն միևնոյն նպատակին, որը իրանք իրանց նպատակ են դրել։ Անհրաժեշտ է նկատել նաև, որ «Ցալգա» լրագիրը գայթակղվում է հէնց նոյն շարժառիթներով որոնք ստիպում էին սօց.-դեմօկրատներին անցեալ տարի հպարտութեամբ յայտարարել, որ հին ռեժիմը տապալվեց վերջնականապէս և որ այժմ գործ ունեն միայն բուրժուազիայի հետ։ Դա անպայման չափազանցրած գնահատութիւն է իրանց ոյժերի և հակառակորդի նշանակութեան մասին։ Մենք կարծում ենք, որ փոքրամասնականների ֆրակցիայի ղեկավարները շատ քիչ տեղեկութիւն ունեն ոյժերի յարաբերութեան մասին և վատ են գնահատում քաղաքական մօմենտը»։ Խոստովանելով, որ մեզ մօտ կառավարչական կուսակցութիւնները շատ թոյլ են, լրագիրը համարում է, որ սօց.-դեմօկրատների առաջարկած տակտիկայի շնորհիւ պայքարը առաջադէմ կուսակցութիւնների միջև անխուսափելի է, որը ամենևին չէ համապատասխանում քաղաքական մօմենտին։

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԵՒ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Նոյեմբերի 2-ին Մոսկվայի կանանց բարձրագոյն դասընթացքներում տեղի է ունեցել անկուսակցական ուսանողուհիների խմբակի ժողովը ընդհանուր ժողովների իրաւասութեան հարցի մասին խորհրդածելու նպատակով։

Այդ հարցը տաք վիճաբանութիւններ է առաջացրել, որի ժամանակ ընդհանուր ուսանողական ժողովների հակառակորդները պատճառաբանում էին իրանց դէմ լինելը նրանով, որ բնակարանը փոքր է և դժուար է ստուգել առաջարկութեան դէմ կամ հաւանութեան համար տրված ձայները, նոյնպէս և հնարաւորութիւն չը կայ այդ վճիռը լուրջ կերպով կշռադատել։ Մատնացոյց էր անվում և այն հանգամանքի վրա, որ բազմութիւնը ընդունակ է յափշտակվել ճառախօսների ճառերով և կայացնել անմիտ որոշումներ։ Այդ պատճառով ժողովների հակառակորդների խմբակը նըպատակայարմար միջոցը համարել է ռէֆերենդումը, որով միայն կարելի կը լինի իմանալ դասընթացքների բոլոր ուսանողուհիների իսկական կարծիքը։ Իսկ ժողովների պաշտպանները ընդունելով, որ լսարանները շատ փոքր են և ամփոփում են իրանց մէջ ամբողջ ուսանողուհիների մի քառորդ մասը միայն, և կարծիքների զանազանութիւնները, նոյնպէս և նրանց չը կազմակերպված լինելը,—որ ժողովները այնպիսի բանաձևեր են ընդունում, որոնք ամենևին չեն արտայայտում մեծամասնութեան կարծիքը,—այնուամենայնիւ յայտնել են, որ միւս կողմից ռէֆերենդումն էլ կունենայ նոյն թերութիւնները, կարծիքների տարբերութիւնները և կազմակերպված չը լինելը, միևնոյն ժամանակ և տեխնիքական կողմից (ձայների հաշւելը) նա կարող է յապաղեցնել կարևոր հրատապ հարցերի լուծումը։ Ժողովի վերջում ընտրել են այդ հարցի առիթով յատուկ մասնաժողով։

—Նոյեմբերի 3-ին Պետերբուրգում կայացել է քաղաքացիական ինժեներական ինստիտուտի ուսանողների ընդհանուր ժողովը՝ խորհրդակցելու պրօֆեսօրների և ուսանողական աւագների խորհրդի միջև ծագած կոնֆլիկտի հարցի մասին։

Ինչպէս յայտնի է, կոնֆլիկտն առաջացել է նրանից, որ պրօֆեսօրների խորհուրդը չէ ուզեցել ընդունել աւագների խորհրդին իբրև ղեկավար ինստիտուտի ուսանողական կեանքի համար։ Ժողովում ընդունված բանաձևով ուսանողները ճանաչելով, որ պրօֆեսօրները իրանց միջամտութեամբ խախտում են ուսանողութեան իրաւունքները, յայտնում են, որ ինստիտուտի ակադեմիական նորմալ կեանքը հնարաւոր է միայն այն դէպքում, երբ ուսանողական ներքին գործերում լիակատար ինքնավարութիւն է վերապահված։ Ժողովը՝ ընդունելով աւագների խորհուրդը ինստիտուտի կազմակերպված ուսանողութեան ներկայացուցիչ՝ այսուհետև վերապահում է նրան գործողութիւնների լիակատար ազատութիւն մինչև պրօֆեսօրների հետ ունեցած կոնֆլիկտը լուսաբանելը։ Ինչ վերաբերում է պրօֆեսօրական մարմնի հետ յարաբերութիւն պահպանելուն առաջիկայում, ուսանողները այն միտքն են յայտնել, որ նա հնարաւոր է միայն այն դէպքում, եթէ պրօֆեսօրները կոնֆլիկտի առիթով վերջնական վճիռ կայացնելուց առաջ խառը խորհրդակցական ժողով կը գումարեն ուսանողութեան և պրօֆեսօրների խորհրդի ներկայացուցիչ- [illegible]

նալ ձեմարանը, և այդ առիթով խնդրամատոյց լինել զինւորական մինիստրին կարելույն չափ շտապեցնելու բացումը։ Իսկ միւս հարցերը, որոնք սերտ կապ ունեն գլխաւոր հարցի հետ, յանձնարարել է մի յատուկ մասնաժողովի՝ քննելու և ձևակերպելու համար։

—Ժողովրդական լուսաւորութեան մինիստրի առաջարկութեամբ րէալական դպրոցներում, այն աշակերտների համար, որոնք ցանկանում են դպրոցը աւարտելուց յետոյ համալսարան մտնել, մտցրված է լատիներէն լեզուն՝ իբրև ոչ պարտադիր առարկայ։

(«Страна»)

ՀԱՑԸ ԹԱՆԿԱՑՆՈՒՄ ԵՆ

Այսօրվայ լրագիրներից տեղեկանում ենք, որ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը որոշել է 2-րդ և 3-րդ տեսակ հացի գինը բարձրացնել ½ կոպէկով և նրա հետ միասին պարտաւորեցնել հացթուխներին անպատճառ թխել 4-րդ տեսակի հաց ևս և ծախել ֆունտը 3 կոպ. ոչ աւելով։ «Իրան տուր տասչորս շահին»։ Գիտէ՞ արդեօք քաղաքային վարչութիւնը, թէ այդ ինչ տեսակի հաց է լինելու, որ պարտաւորված ծախելու են հացթուխները 3 կոպէկով։ Վարչութեան այդ հայճեղ որոշումը, ըստ երևոյթին, իր վերջնական լուծումը կը ստանայ, երբ կենթարկվի նաև ձայնաւորների քննութեան։ Իսկ եթէ աչքի առաջ ունենանք այն լիանցած անտարբերութիւնը, որ ունեն ձայնաւորները, պէտք է եզրակացնել, որ որոշումը ոչ մի փոփոխութեան չէ ենթարկվելու, որովհետև, ըստ սովորականի, ձայնաւորները նշանակած օրը չեն գայ դումա, այդ կենսական նշանակութիւն ունեցող հարցը քննութեան ենթարկվել չէ կարող բոլորի կողմից և կը յայտարարվի լուծված։ Ուրեմն, որպէսզի կարելի լինի ուտելու համար պէտքական հաց գնելու, պէտք է ֆունտին վճարել 5—6 կոպէկ…։

Կար մի երանելի ժամանակ, երբ քաղաքի «հայր» կոչվող ձայնաւորների համար դեռ նշանակութիւն ունէին իրանց ընտրող ազգաբնակութեան շահերը. նրանք նախ «պրոբի» էին ենթարկում ալիւրը, միսը և ապա թէ խօսում նրա գինը բարձրացնել-իջեցնելու մասին։ Դեռ մի տարի սրանից առաջ այդ սրտացաւ «հայրերը», վերցնելով մսի վրայից տակսան, որպէս փորձ, թոյլ տուին մսավաճառներին կարճ ժամանակով ծախելու առանց տակսայի, որպէսզի յետոյ հնար լինէր արդարացի տակսա նշանակելու։ Անցաւ ժամանակ, բայց այդ մասին այլևս մտածող չը կայ։ Մսի գինը այժմս և միշտ խաղում է 10—12 կոպէկի արանքում, թէկուզ լինի նա գոմէշի «կանճաներ», որով, ի դէպ, առատութեամբ բաշխվում են ոչ նախանձելի միս ուտողներին։ Թող յիշեն մեր ընտրեալները, որ ազգաբնակութեան մեծ մասը, նա, որ միշտ ցամաք հացով կերակրվելու բաղդին է արժանացած, աղքատ է, նա անկարող է 5—6 կոպէկանոց հացով մանր երեխաներ կշտացնելու։ Թող քննեն, փորձեն քանի ուշ չէ, գոհ չը գնան մի քանի գրպանները հաստացնել ցանկացող խօզէյինների քմահաճոյքներին, միանգամայն մոռացութեան տալով 1000-աւոր աղքատ ընտանիքների առանց այն էլ մոռացված շահերը։ Արդեօք փորձով գիտէ՞ քաղաքի վարչութիւնը, որ արդարև 3-րդ տեսակի կիսով չափ սիմինդ խառնած ալիւրից ստացված կիսահմոր հացը ֆունտը 4 կոպէկով ծախողը վնասվում է իսկապէս, թէ գլուխները ցաւեցնել անգամ աւելորդ են համարում այդ աստիճան մանր բաների մասին մտածելով…

Բագրատ Մկրտումեան

ՆԱՂԴ ՄՈՒՇՏԱՐԻՆԵՐ

«Եզը որ ընկնում է, դանակաւորներն էլ շատանում են»։ Ճիշտ այդպիսի ընկած եզան դրութեան մէջ է այժմ «հզօր» Ռուսաստանը, շնորհիւ մեր արդի բիւրօկրատիկ կառավարութեան։ Պետական սնտուկը արդէն դատարկվել է, կառավարութեան վարկը ամեն տեղ ընկած է. այլևս ոչ ոք չէ կամենում փող տալ. թէ՛ կոմս-Վիտտէի, թէ Կոկովցեվի, թէ Իզմայիլովսկու և թէ միւս կառավարչական ագենտների բոլոր ջանքերը Եւրոպայում ապարդիւն դուրս եկան։ Մինչդեռ կառավարութեանը փող է հարկաւոր, անպատճառ հարկաւոր է, այլապէս ոչ մի հնարաւորութիւն չի լինի «անեծված կրամոլան» խեղդել, ոչնչացնել. չէ՞ որ առանց ռուբլի, առանց վարձատրութեան ոչ ոք չէ համաձայնում մեր երջանիկ երկրում բիւրօկրատիայի ծառայել, սրա խաթրու «հայրենիքը» փրկել կրամոլայի վտանգից։ Մինչև իսկ «իսկական» ռուս մարդիկն էլ ոչինչ չեն անում «հայրենիքի» համար առանց փողի, առանց վարձատրութեան։ Իսկ այդ անիծված փողը չը կայ, չը կայ ու չը կայ։

Մեր կառավարութեան ահա հէնց այս անելանելի դրութիւնն ու նեղ վիճակը զգալով, վերջին ժամանակներս, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի թերթերը, զանազան ծակ ու ծուկերից Պետերբուրգ են թափվել հազար տեսակ «խիստ սրտացաւ» Արութին-աղաներ ու Հէյդար-Մաղաթներ, որոնք ամեն կողմից իրանց «դրդիմանդ» ծառայութիւններն են առաջարկում մեր կառավարութեանը։

Այս՝ պղտոր ջրում ձուկ որսողները, մի կարծէք թէ, սովորական տզրուկների նման, վաշխառուական մեծ տոկոսներ են պահանջում։ Բոլորովին ոչ. նրանցից ոմանք նոյնիսկ ոչ մի տոկոս էլ չեն ցանկանում ստանալ և պատրաստ են հէնց նոյն հարիւր միլիոններ թափել մեր կառավարութեան գոգը, եթէ միայն սա այդ «բախշիշի» փոխարէն մի որևէ «չընչին» արդիւնաբերութեան կոնցեսսիա տայ. գիցուք պետական հանքերի մշակութիւնը, այս կամ այն արդիւնաւէտ ծովում ձուկ որսալու արտօնութիւնը և այլն։

Ինչպէս պատմում են, այդպիսի՝ Ռուսաստանի համար խիստ սրտացաւ «բարեկամներից» մէկը, Լօյիկ դը Լօբէլ անունով մի ֆրանսիացի խոստանում է 500 միլիոն ռուբլի տալ մեր կառավարութեանը, եթէ միայն Նրան կոնցեսսիա տրվի՝ Սիբիրի երկաթուղու [illegible] վերջը իմացել են, որ նա բոլորովին կատակ անելու դիտաւորութեամբ չէ եկել Պետերբուրգ և ոչ էլ նա իր սեփական փողն է առաջարկում։ Նա եկել է մի շատ հարուստ ամերիկական սինդիկատի կողմից, որը դիտաւորութիւն ունի, Սիբիրի երկաթուղին մինչև Բերինգեան նեղուցը անցկացնելուց յետոյ, տունել անցկացնել և այդ նեղուցի տակով ու, այդպիսով, Եւրոպ-Ասիան միացնել ցամաքային գծով Ալասկայի և ամբողջ Ամերիկայի հետ։

Այս գրանդիօզ ծրագրի մասին եւրոպական և մանաւանդ ամերիկական լրագիրներում սկսել էր խօսվել հէնց այն օրվանից, երբ Ռուսաստանը մեծ սիբիրեան ճանապարհը ձեռնարկեց շինելու։ Եւ ահա գործնական ամերիկացիք շատ փառաւոր ու յարմար առիթ են գտել իրանց վիթխարի ծրագիրը իրագործելու համար։

Հասկանալու համար թէ ինչում է առիթի «յարմարութիւնը», հարց առաջարկելու է, թէ՝ ինչու համար է ձեռնարկվում այդ վիթխարի գործը, ինչու համար են ուզում միացնել հիւսիսային ցուրտ ու անմարդաբնակ Սիբիրը նոյնչափ ցուրտ Ալասկայի հետ։

Ճիշտ է, այդ գրանդիօզ ծրագիրը իրագործվելուց յետոյ մարդիկ կարող են Բորդօյից կամ Պարիզից երկաթուղի նստել ու մինչև Նիւ-Եօրկ ցամաքով անցնել, ազատվելով ծովային՝ շատերի համար անհաճելի՝ ճանապարհորդութիւնից։ Բայց չէ՞ որ այդպիսի ճանապարհորդութիւնը թէ չափազանց թանգ կը նստի և թէ անհամեմատ երկար կը տևի։ Վերջին տեսակի նաւերը այժմ Ատլանտեան ովկիանոսը 5—6 օրվան մէջ են կտրում, այնպէս որ Նիւ-Եօրկից կարելի է 6-րդ կամ առ առաւելն 7-րդ օրը Պարիզ հասնել, այն ինչ բոլոր ժամանակ երկաթուղիով Ամերիկայից Եւրոպա գնալու համար առնուազն 40—50 օր կը տևի։ Ո՞ր խելացին ուրեմն կը համաձայնի ցամաքային ճանապարհը ընտրել։

Ամերիկայից Եւրոպ-Ասիա, կամ ընդհակառակը, երկաթուղիով ապրանքներ տեղափոխելու մասին էլ երբեք խօսք չէ կարող լինել, որովհետև դրա համար ծովային ճանապարհը միշտ գերադասելի է համարվում իր անհամեմատ էժանութեան պատճառով։

Ուրեմն, ինչու համար է ամերիկացիների վերոգրեալ ծրագիրը։ Միթէ միայն նրա համար, որ մի շատ գրանդիօզ գործ կատարած լինեն։ Կամ գուցէ նրա համար, որ Սիբիրի և Ալասկայի էսկիմօսները միջոց ունենան միմեանց հետ մտերմական յարաբերութիւն ու խնամիութիւն հաստատել։

Չէ, ամերիկացիք չափազանց գործնական մարդիկ են, ուրեմն այդպիսի յիմարութիւններ չեն մտածի։ Անշուշտ, նրանք շատ աւելի մեծ սպասելիքներ ունեն ապագայի համար, որ համաձայնում են հարիւրաւոր միլիոններ ծախսել այդ գործի վրա, բացի այն 500 միլիոնից, որ նրանք միմիայն կոնցեսսիայի համար են ուզում վճարել մեր կառավարութեանը։

Ամերիկացիների խորին միտքը թափանցելու ու նրանց ո՛ր աստիճան գործնական մարդիկ լինելը հասկանալու համար, անհրաժեշտ է ասել նախ այն, (ի հարկէ, դեռ ևս չը գիտցողներին), որ հիւսիսային Ամերիկայի Ալասկա թերակղզին մի ժամանակ Ռուսաստանին էր պատկանում, իսկ 1867 թւականին Միացեալ-Նահանգները այդ անպէտ Ալասկան Ռուսաստանից գնեցին, վճարելով սրան մօտ 10—15 միլիոն ռուբլի։ Ճիշտ այնպէս, ինչպէս որ պարսից շահերից մէկը Կասպից ծովի ամբողջ հարաւային մասը ծախել էր ռուսներին, նրա ջուրը թէ խմելու և թէ ոռոգելու համար բոլորովին անպէտք համարելով, այնպէս էլ ռուսաց կառավարութիւնը Ալասկան էր ծախել, նրան ոչ մի բանի համար պէտք չեղող մի ամայի երկիր համարելով։ Սակայն, բանը նրանումն է, որ Ռուս.-ը իր գնած հրաշալի Կասպ. ծովի մասից այնչափ արդիւնք չէ կարողանում ստանալ, ինչպիսին ամերիկացիք են ստանում, յիրաւի որ, ամայի Ալասկայից։ Բացի այդ թերակղզու վրա ու ծովափերում կատարված ամենահարուստ որսորդութիւնից ու ձկնորսութիւնից ստացված եկամուտները, նրանք այնտեղից տարեկան մի քանի հարիւր միլիոնների ոսկի են միայն դուրս բերում։

Այս հանգամանքը իմանալուց յետոյ, այժմ նայենք, թէ պ. Լօյիկ դը Լօբէլը ինչ պայմաններով է ցանկանում վերցնել վերոգրեալ ճանապարհի կոնցեսսիան։ Նախ՝ նա (այսինքն ամերիկացիք) ցանկանում է կոնցեսսիան վերցնել իննսուն (90) տարով, և ապա՝ նա ցանկանում է, որ շինվելիք երկաթուղու ամբողջ երկարութեամբ գտնված հողը, 12 վերստ լայնութեամբ ճանապարհի երկու կողմից, նոյնպէս 90 տարով սինդիկատին տրվի նրա մակերևոյթն ու ներսը (երկրի տակ եղած հանքերը) շահագործելու համար։ Այլ խօսքերով՝ սինդիկատը կամենում է շինվելիք ճանապարհի ամբողջ երկարութեամբ վրա, 12 վերստ լայնութեամբ, ամերիկական սեփականութիւն, ամերիկական երկիր ունենալ, ինչպէս եղաւ և Ալասկան։ Թէև այստեղ գնելու խօսք չը կայ, այլ միմիայն կապալ է, բայց չափազանց միամիտ լինելու է չը հասկանալու համար, որ 90 տարվան կապալը բոլորովին համահաւասար է գնելուն։ Միթէ Պորտ-Արտուրն ու Տալիենվանի թերակղզին էլ կապալով վերցված չէր Ռուսաստանի կողմից, մինչդեռ պատերազմի ժամանակ բոլորովին մոռացված էր կապալը և հարիւր հազարաւոր մարդիկ կոտորվեցին յանուն «հայրենիքի» պաշտպանութեան։

Մի կողմ թողնելով այդ 12 վերստ լայնութեամբ երկրի դրսից ու ներսից շահագործելու խնդիրը, վստահութեամբ կարելի է ասել, որ ամերիկացիք, այդ պայմանագրով իրանց ոտի տակը հող ունենալով Սիբիրում, շատ կարճ ժամանակի ընթացքում, եթէ ոչ քաղաքականապէս, գոնէ տնտեսապէս բոլորովին կը նուաճեն ամբողջ Սիբիրը։ Այդ այնքան պարզ է, ինչպէս 2 անգամ 2 կանի չորս. որովհետև, այդ երկաթուղին շինելուց յետոյ, նախ՝ Ամերիկան աւելի կը մօտենայ Սիբիրին, քան մայր Ռուսաստանն է, և ապա՝ բիւրօկրատիայի ձեռքով նախաձեռնութիւնից բո- [illegible] ուղղակի կը խեղդեն ամբողջ Սիբիրը իրանց ապրանքներով ու, նամանաւանդ, իրանց արդիւնագործական ձեռնարկութիւններով:

---

*) [illegible]

Սրանք բոլորը, ի հարկէ, ապագայի խնդիրներ են և չեն կարող մեզ այժմ շատ զբաղեցնել: Չեն կարող դրանք մեզ նոյնիսկ մտատանջութիւն պատճառել, որովհետև երկիրների արագ զարգացման ու առաջադիմութեան տեսակէտից, շատ աւելի լաւ կը լինի, որ Սիբիրի նման մի հարուստ, բայց մինչև օրս անմշակ մնացած երկիր, աւելի գործունեայ և ձեռներէց մարդկանց ձեռք ընկնելով, շուտով մշակվի, զարգանայ ու ծաղկի, քան շարունակի ամայի մնալ: Բայց ներկայումս այդ չէ մեզ հետաքրքրողը, ասում ենք:

Մեզ շատ աւելի այս բոլորիս հետաքրքրում է այն հարցը, թէ արդեօք մեր կառավարութիւնը պիտի ընդունի՞ արված առաջարկութիւնը և պիտի տա՞յ ցանկացված կոնցեսիան: Պայմանները, ինչպէս ասացինք, վերին աստիճանի նպաստաւոր են փողի կարօտ կառավարութեան համար. պ. դը Լօբէլը 500 միլիոն ռուբլի է առաջարկում այդ կոնցեսիայի համար, որից 200 միլիոնը նա պատրաստ է հէնց այս րոպէիս վճարել: Այդպիսի խոշոր գումարը, մեր կառավարութեան ներկայ տագնապի ժամանակ ու այն էլ Պետական Դումայի ընտրութիւններից առաջ, ճիշտ իր ոտքով եկած մառաղի է նմանում: Բայց պիտի օգտվի՞ արդեօք նա այդ մառաղից, որի համար, ինչպէս տեսանք, փոխադարձ շատ աւելի մեծ մառաղ է պահանջում: Պիտի համաձայնվի՞ արդեօք «հայրենիքի ամբողջութեան» ու «հայրենասիրութեան» անունից միշտ և շարունակ խօսող բիւրօկրատիան իր ձեռքով այդ նոյն հայրենիքը անդամահատութեան ենթարկել ու պատառ-պատառ աճուրդի դնել:

Լաւատեսները չեն հաւատում, թէ բիւրօկրատիան այդպիսի «դաւաճանութեան» կարող է հասնել, իրանց ասածը մասամբ հիմնելով և այն հանգամանքի վրա, որ այդ դէպքում «իսկական ռուս» մարդիկ էլ կը կատաղեն բիւրօկրատիայի դէմ, իսկ սա երբեք չի ցանկանայ, որ ձախ թևի բանակում «կրամոլա» խնդրելու համար աջ թևի բանակումն էլ «կրամոլա» մտցնի: Բայց մենք լաւատեսներից չենք և կարծում ենք, որ կառավարութեան այդպիսի աչքառ կատարած սնանկութեան դէպքում ամենից աւելի կը ցնծան ու կուրախանան «իսկական ռուս» մարդիկ, որովհետև ստացվող միլիոնների մի լաւ բաժինը հէնց այդ «հայրենասէրների» գրպանը պիտի մտնի...

Ռ.

ԵՐԵԿՈՅԹ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ուրբաթ, նոյեմբերի 10-ին, հանգուցեալ դերասան Գ. Պետրոսեանի յիշատակին տրվեց մի գրական-երաժշտական երեկոյթ Թիֆլիսի Գրական Գեղարուեստական Սալօնում:

Երեկոյթը կրում էր ընտանեկան բնաւորութիւն և գրաւել էր Գ. Պետրոսեանի յարգողների, բաղկացած երկու սեռի երիտասարդներից: Թէ երաժշտական և թէ գրական մասը կազմված էին խնամքով և արժանացան ներկաների ջերմ հաւանութեան:

Ջութակահար Ցէյտլին նուագեց Սէն-սանսի երկու հեղինակութիւնը Introduction և Rondo Capriccioso մեծ հմտութեամբ: Ցէյտլինի ջութակը նուրբ և հարազատ կերպով արտացոլում է հոգեկան այն յուզմունքները, որոնք յայտնված են երաժշտական ստեղծագործութեան մէջ: Ձայների մաքրութիւնը և բնական ույժը դարձնում են այդ երաժշտութիւնը իմաստալից և լսելիքի համար փայփայիչ:

Դաշնակահար Մատկօվսկին նուագեց Շոպէնից և Լիստից: Վերցրած կտորների տարբեր բնաւորութիւնը հնարաւորութիւն տուեց նրան երկու տրամադրութիւն արտայայտել, մի կողմից մեղմ, իսկ միւս կողմից բուռն ու փոթորկալից: Իսկ վերջին տեսակի նուագածութեան մէջ Մատկօվսկին ունի հաստատուն և արտայայտիչ զարնուածքներ:

Շէրուլեվ երգեց «Դօն-Կարլոս» օպերայից «Կը ննջեմ մենակ» կտորը, իմաստ և զգացմունք մտցնելով իր երգի մէջ: Տիկին Սափարօվա-Շէրուլեվա ունի մաքուր և նուրբ ձայն: Գեղեցիկ երգեց «Օրօրոցի երգը»:

Տիկին Նաւասարդեան երգեց Տօստիի «Վերջին իղձ» և հայերէն երկու երգ: Տիկնոջ ձայնը մշակվել է, զարգացել և հնչում է ուժեղ ու հաստատ:

Տիկին Սիրանոյշ կարդաց զգացված ձայնով և խելացի առոգանութեամբ Ռուսեանի «Յիշատակը»:

Պրեօբրաժէնսկայա արտասանեց «Ձիւնի տակ» ոտանաւորը զգացմունքով և ելևէջներով:

Դերասան Զաքարեան մեծ հմտութեամբ արտասանեց մի քանի բնորոշ տեսարաններ: Դերասանը շատ բնական և հարազատ կերպով է ներկայացնում առօրեայ տիպեր իրանց խօսակցութիւններով:

Մի վրացի պարոն ներկայացրեց վրաց կեանքից տեսարաններ, որոնք մեծ հետաքրքրութիւն պատճառեցին:

Շնորհալի կերպով նուագակցում էր տիկին Այվազեանց դաշնամուրի վրա:

Գրական-երաժշտ. մասից յետոյ արտիստները և հասարակութիւնը խմբվեցին միասին և սկսեցին զրոյց գեղարուեստի և նրա նշանակութեան մասին հասարակական կեանքում:

Երեկոյթը թողեց լաւ տպաւորութիւն հանդիսականների վրա:

Միրոդ

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԵՒ ԲԱԳՈՒԻ ԲԱՆՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Բագուն, որպէս խոշոր արդիւնաբերական, բանւորական քաղաք, միջազգային բնաւորութիւն է կրում: Նա իր մէջն է ամփոփել ամեն ազգի կապիտալիստ և բանւոր դասակարգերը:

70-ական թւականներից սկսած Բագուի արդիւնաբերութիւնը այնքան զարգացաւ, որ նա գրաւեց եւրոպական շուկաները:

Բագուի նաւթարդիւնաբերութիւնը նախկին տարիներում չէր պահանջում մեծ կապիտալ, այդ պատճառով էլ Բագւում գործ սկսեց մանր բուրժուազիան, մանաւանդ հայ բուրժուազիան և դիզեց մեծ կապիտալ. մեր օրերում այդ վերոյիշեալները կազմում են բաւական խոշոր կապիտալիստներ:

Թուրք բէգերի և վրաց իշխանների կալուածքները մեծ մասամբ պարտքերի պատճառով ծախվում էին: Աւատական կարգերի այդ մնացորդները մէկը միւսի ետևից փլվում էին, կորցնելով իրանց սեփականութիւնը: Կապիտալի մուտքն էր, որը սպառնում էր ոչնչացնել աւատական կարգերը և նրա տեղը դնել նորագոյն կապիտալիստական կարգեր ու կենտրոնացնել իր ձեռքում Կովկասի արդիւնաբերութեան բոլոր ճիւղերը: Նոր զարգացած հայ բուրժուազիայի ձեռքն անցան մեծ մասամբ նաև Բագուի Թուրք բէգերի նաւթահողերը, որոնց վերցրել էր հայ կապիտալիստը շահագործելու:

Այդ հսկայական հարստութիւնը անցնում է հայ բուրժուազիայի ձեռքը և գրգռում Թուրք բէգերի ախորժակը, իսկ միւս կողմից անկարող լինելով դիմանալ «կապիտալի մրցմանը», շնորհիւ իր տգիտութեան ու անկուլտուրականութեան, կորցնելու վրա էր կամ արդէն կորցրել էր իր սեփականութեան վերջին փշրանքը: Ահա այս էր պատճառը, որ Բագուի Թուրք բէգերը իրանց յանցանքը հայ բուրժուազիայի վզին են փաթաթում և մեղադրում նրան: Վրէժխնդրութեան ոգին Թուրք բէգերի կողմից արտայայտվեց սուր կերպով: Կոտորածի ժամանակ նրանք այրում, փչացնում էին միմիայն հայերի թէ՛ տները և թէ՛ նաւթահանքերը, որպէսզի ոչնչացնեն ու կտոր հացի կարօտ թողնեն նրանց: Բագուի Թուրք բէգերի և հարուստների այս վարմունքը արձագանք գտաւ նաև գաւառներում Թուրք բէգերի և աղալարների մէջ:

Իսկ բէգերի հետ աւանդութիւններով կապված Թուրք մասսան, առանց իրան հաշիւ տալու իր արածի մասին, ենթարկվեց բէգերի հրամանին և գործիք դարձաւ նրանց ձեռքում թէ Բագւում և թէ գաւառներում: Բացի դրանից դրան նպաստում էր Թուրք մասսայի համար սովորական դարձած թալանի, զոռութեան, աւազակութեան հակումը: Սրան աւելացնենք նրա քրօնիքական դարձած ծուլութիւնն ու տգիտութիւնը: Այդ բոլորը պարարտ հող են ներկայացնում բէգերի համար իրանց հրամանը ի կատար ածելու:

Աւատական կարգերի մնացորդ վրացի իշխանները ևս վրէժխնդրութեամբ էին լցված դէպի հայ ժողովուրդը, մանաւանդ դէպի հայ բուրժուազիան, որը տէր է դարձել մեծ մասամբ իր դարերի սեփականութեանը: Սակայն վրացի իշխանը նոյնը չէ վրացի ժողովրդի համար, ինչ որ Թուրք բէգն է իր ժողովրդի համար: Վրացի իշխանները կորցրել են իրանց արժէքը մասսայի աչքում, նրանց վրա նայում են որպէս ձրիակերների վրա, որոնք սպառում են բանւոր գիւղացու արիւն քրտինքով վաստակածը: Վրացի գիւղացիութիւնն ու բանւորութիւնը, շնորհիւ սոց.-դեմոկրատիայի պրոպագանդայի, արդէն գիտակցում են իրանց տնտեսական ու քաղաքական դրութիւնը և օժանդակում են Ռուսաստանի ազատագրական մեծ շարժմանը: Իսկ ողորմելի Թուրք մասսան, գործիք դարձած բէգերի և աղալարների ձեռքին, միմիայն խուլիգանական դեր է կատարում ու խանգարում ազատագրական մեծ շարժմանը: Ահա այս էր պատճառը, որ պրովօկացիան հող գտաւ Թուրք մասսայի մէջ, իսկ ընդհակառակը՝ հող չը գտաւ վրացի մասսայի մէջ:

Արդիւնաբերութեան հետ և զարգացաւ բանւորութիւնը: Կովկասեան ազգերի գիւղացիութեան և բանւորութեան համար երկրորդ հայրենիք դարձաւ Բագուն: Սեփականութիւնից զրկված գիւղացիութիւնը տեղ էր որոնում մի կտոր հաց աշխատելու համար և նա այդ տեղը Բագւում գտաւ: Հազարաւոր բանւորութիւն տեղ էր գտնում աշխատելու և վարձատրվում էր առատ, քան մի ուրիշ քաղաքում: Այդ բանւորութիւնը կտրեց իր հայրենիքի հետ կապը և մշտական հայրենիք ընտրեց Բագուն: Միջավայրը փոխեց ամեն ինչ, ժամանակի ընթացքում գիւղացին կորցրեց իր հին նահապետական ու գեղջկական մտածողութեան եղանակը և տեղի տուեց նորին: Արդէն բանւորի համար պահանջ դարձաւ մարդավայել կեանքը ու նրա մէջ բազմակողմանի պահանջներ ծագեցին, որոնց սակայն նա չէր կարողանում բաւարարութիւն տալ: Դասակարգային գիտակցութեան հասած Բագուի բանւորութեան համար տիրող մթնոլորտը անտանելի դարձաւ, և նա բողոքող «տարր» հանդիսացաւ: Մասնակի բնաւորութիւն կրող բողոքները ժամանակի ընթացքում ստացան մասսայական բնաւորութիւն, որը համախմբվելով մի դրօշի տակ, մեր օրերում արտայայտվեց որպէս մի կազմակերպված քաղաքական կուսակցութիւն:

Բագուի բանւորութիւնը կազմում է 35,000 մարդ, որոնցից մահմեդականները կազմում են 45%, ռուսները 25%, հայերը 20% և ուրիշ ազգութիւններ 15%:

Ինչպէս տեսնում էք, ամենախոշոր տոկոսը Բագուի բանւորութեան կազմում են մահմեդականները, որոնց մէջ պարսկահպատակ Թուրքերը պատկառելի թիւ են կազմում: Սրանք զուրկ են դասակարգային գիտակցութիւնից, տգէտ են, մեծ մասը անգրագէտ ու սաստիկ կրօնամոլ: Իսկ ռուս և հայ բանւորները շատ աւելի գիտակից են իրանց դասակարգային շահերին—և լաւ արհեստաւորներ են:

Բանւորական շարժումները Բագւում, համեմատած ուրիշ քաղաքների հետ, շատ ուշ սկսվեցին, շնորհիւ Թուրք «բէկաչիների» տարրերի, որոնք չը հասկանալով միւս ազգերին պատկանող բանւորների կատարած գործադուլների նպատակն ու իմաստը, միշտ խանգարում էին ու վնասում իրանց շահերին: Մահմեդական ազգերը իրար մէջ ունենալով կրօնական թշնամութիւն, այն է, սիւննիներ և շիաներ, ոչ մի դէպքում չէին հաշտվում իրար հետ և դժուար էր լինում կազմակերպել, հասկացնել իրանց դասակարգային շահերը ու համախմբել մի դրօշակի տակ: Միւս կողմից պարսկահպատակ բանւորութիւնը իր հակաբանւորական ձգտումներով շատ աւելի յետադիմական է և խանգարող՝ քան թէ միւս մահմեդական տարրերը և չէ ենթարկվում ոչ մի պրոպագանդայի. սա ևս լրացնում էր պակասը:

Հայ բանւորութիւնն էլ պակաս չէ նպաստել գործադուլների խանգարմանը: Իսկ դրա պատճառը պէտք է որոնել հայ յեղափոխական կուսակցութիւնների մէջ, որոնք իրանց սխալ պրոպագանդայով կասեցնել են տալիս հայ բանւորութեանը ակտիւ կերպով մասնակցելու իր առօրեայ խնդիրների մէջ: «Ազատ Հայաստանի» գաղափարով սնուցած հայ գիւղացիութիւնը ու բանւորութիւնը երկար ժամանակ ձեռնպահ մնաց գործադուլների միջոցին: «Ազատ Հայաստանի» գաղափարը «ազգային անկախութեան» ձգտումը և պրոպագանդան միշտ այդ ուղղութեամբ մթնեցնում էին բանւորի ու գիւղացիութեան ինքնագիտակցութիւնը:

Շնորհիւ հայ-յեղ. կուսակցութիւնների, շովինիզմի գաղափարը շատ զարգացաւ, մանաւանդ տաճկահայերի կոտորածից յետոյ ու եկեղեցական կալուածները խլելուց յետոյ: Յանցանքի մեծ մասը ընկնում է «ինքնապաշտպանութեան կոմիտէի» վրա, որը վերացաւ շատ շուտով, սակայն շարունակութիւնը թողեց Դաշնակցութեանը:

Սակայն, չը մոռանանք ասել, որ սուլթանն էլ ցանկացաւ իր սօֆթաների միջոցով «համիսլամական» գաղափարով նոյն շովինիզմը զարգացնել Թուրք բանւորութեան ու գիւղացիութեան մէջ, սակայն չաջողվեց: Այդ գաղափարը մնաց սաղմնային վիճակում և մնաց սեփականութիւն միմիայն բէգերի ու աղալարների: Բայց Բագուի առաջին կոտորածից յետոյ համիսլամական գաղափարը զարգացաւ և շատ տեղերում ընդունեց մասսայական բնաւորութիւն: Կեանքը ու իրականութիւնը հետզհետէ գիտակցութեան բերեցին հայ բանւորութեանը, որը 1903 թւականից սկսեց արդէն հետաքրքրութիւն ցոյց տալ դէպի գործադուլները ու մասնակցել նրանց մէջ: Սակայն նոյն բանը տեղի չունեցաւ Թուրք բանւորութեան մէջ. նրանք դեռ շարունակում էին խանգարել գործադուլները: Այնուամենայնիւ 1905 թւին, դեկտեմբերեան յամառ ու երկարատև գործադուլը, որին և մասնակցեց Թուրք բանւորութիւնը ոչ կազմակերպված ու գիտակցական կերպով, ստիպեց կապիտալիստներին շատ բան զիջել բանւորներին, և այն ժամանակվանից Բագուն դարձաւ թատերաբեմ, որ իր քրօնիկական դարձած գործադուլներով սկսեց վրդովել ամբողջ Կովկասի հանգիստը:

1897-ից սկսվեց գոլիցինեան ռէժիմը՝ վտանգաւոր և ամարդի իր անբաժան եղբայր Վէլիչկոյի հետ: «Կաւկազ» թերթի էջերը լցված էին անբարոյականացնող յօդուածներով. մի կողմից շոյում էին վրացիներին ու Թուրքերին, իսկ միւս կողմից վատաբանում, քարկոծում էին հայերին ու ամեն մի յանցանք բարդում հայերի վրա. իսկ տգէտ մասսան այդ բոլոր բանաւոր ու գրաւոր քարոզները ընդունում էր հալած իւղի տեղ: Այս յանցաւոր գործունէութիւնն էլ, գոլիցինեան ռէժիմն էլ ունեցան իրանց նախապատրաստական դերը հայ-Թուրքական ընդհարումների մէջ:

1895 թւականին, երբ տաճկահայկական յեղափոխական շարժումները մեծ ծաւալ էին ստացել և խօսք կար ռեֆորմներ տալու հայ ազգին Տաճկաստանում, կովկասահայը ուրախութեան ու ցնծութեան մէջ ամեն տեղ, քաղաքներում ու գիւղերում, կատարում էր ուրախութիւններ: Յեղափոխականացած կովկասահայը ռուս կառավարութեանը դուր չէկաւ, որի մէջ յանցաւոր գործունէութիւն նկատեց իր դէմ: Եւ նա առանց ուշացնելու ձեռնարկեց մեռցնելու այդ ուղղութիւնը. 1895 թւի Մկրտութեանից մի օր առաջ լուր տարածվեց Թիֆլիսում, որ երբ թէ վրացիները պիտի յարձակվեն խաչը ջուրը գցելու օրը հայերի վրա ու կոտորեն: Ոչ ոք չը հաւատաց այդ շինծու լուրին, սակայն կասկածով բռնված ամեն մարդ զգուշացաւ և այնպէս գնաց Վանքը հանդէսին մասնակցելու: Օրը անցաւ խաղաղ, պրովօկացիան հող չը գտաւ:

1900 թւին Գանձակում լուր տարածվեց, որ երբ թէ Թուրքերը պիտի յարձակվեն հայերի վրա Մկրտութեան օրը և կոտորեն: Լուրը ճնշող տպաւորութիւն թողեց, ամեն մարդ նախազգուշութեան միջոցներ ձեռք առաւ, բայց միաժամանակ չէր հաւատում տարածված լուրին: Օրը անցաւ շատ խաղաղ: Պրովօկացիան այս անգամ էլ հող չը գտաւ:

1904 թւի սկզբներին լուր տարածվեց, երբ թէ Թռուցիկ էր հրատարակված և կպցրած պատերին՝ Տատարսկի կոմիտէտ անունով, որ երբ թէ հայերը իրանց ֆիդայիններին առաջնորդութեամբ պատրաստվել են Թուրքերին կոտորելու սուգի օրերին, մանաւանդ վերջին օրը: Լուրը կայծակի արագութեամբ տարածվեց քաղաքում. ամեն տեղ հայ և Թուրք ժողովուրդը իրար հարց էին տալիս այդ լուրի առթիւ և չէին կարողանում մի որևէ բացատրութիւն տալ իրար կամ ցոյց տալ աղբիւրը: Եւ թէ հակառակ շէյթանի ցանկութեան՝ ոչ մի միջնադէպ չը պատահեց ու անցաւ խաղաղ:

Այս Թռուցիկի մասին Բագուի սոց.-դեմոկրատները հետաքրքրվեցին և իմացան, որ դա ադմինիստրացիայի գործն է: Յայտարարեցին Թուրք և հայ ժողովրդին զգուշանալ պրովօկացիայից:

Ինչպէս ցոյց տուին մեզ վերոյիշեալ փաստերը, ադմինիստրացիան ամեն միջոց գործ դրեց Կովկասում առաջ բերելու հայ-Թուրքական և հայ-վրացական ընդհարումներ, սակայն բոլոր դէպքերում էլ նա չը կարողացաւ աջողեցնել: Միակ միջոցը ընդհարումներ առաջ բերելու համար մնում էր, որ ադմինիստրացիան իր պասսիւ վիճակից անցնէր ակտիւ դրութեան, և նա արաւ այդ քայլը, մասնակցեց ակտիւ կերպով: Տարիներից ի վեր նախապատրաստված Թուրք մասսան ենթարկվեց պրովօկացիայի:

Ռուս-ճապօնական պատերազմի յայտարարութիւնից յետոյ շատ վատացաւ բիւրօկրատական կառավարութեան դրութիւնը: Մանջուրիայի ռուս զօրքի անյաջողութիւնները տակն ու վրա էին անում ռուս ժողովրդին և յեղաշրջում նրա մտածողութեան եղանակը և նա դառնում էր բողոքող տարր:

Մի կողմից Մանջուրիայի անյաջողութիւնները, միւս կողմից օր օրի վրա կուտակվող ներքին խռովութիւնները ալեկոծված ծովի նման սպառնում էին իրանց ահռելի ուժով ջարդ ու փշուր անել ամեն մէկ դիմադրութիւն. դա գիտակցող պրօլետարիատն էր, որը տարիներից ի վեր բողոքելով տիրող ռէժիմի դէմ, անհաւասար կռւում շատ բան էր կորցրել. բանւորը սպասում էր յարմար մոմենտի, որպէսզի իր հաշիւները մաքրէ բիւրօկրատական կառավարութեան հետ. և այդ մօմենտն էլ վրա հասաւ. այդ արտաքին պատերազմն էր իր անյաջողութիւններով:

Շատ լաւ էր հասկանում կառավարութիւնը, որ ինքը այլ ևս անզօր պիտի լինի ճնշել ներքին խռովութիւնները, որը շատ վտանգաւոր է, քան Մանջուրիայի պարտութիւնը: Բիւրօկրատական կառավարութիւնը իր փրկութեան միակ միջոցը գտաւ խուլիգանական, հրէական, հայ-Թուրքական ջարդերի մէջ, մի բան, որը աւելի արագացրեց յեղափոխական գաղափարի արագ զարգացումը ու հրապարակ դուրս գալը:

Կառավարութեան նպատակն էր կովկասեան պրօլետարիատին կասեցնել տալ Ռուսաստանի ազատագրական շարժումից և ջլատել նրա ույժերը: Ուրեմն միակ բուժիչ միջոցն էր հանդիսանում ռէակցիօներ տարրերի ձեռքով՝ նոյն համանման շահերով կապված, բայց զանազան ազգութեան պրօլետարիատին կոտորել տալ միմեանց ի վնաս իրանց դասակարգային շահերի:

Բագուն լինելով Կովկասի սիրտը, և լաւ հասկացած լինելով կառավարութիւնը, որ նա բազմաթիւ բանւորութեամբ մեծ դեր կարող է կատարել ազատագրական շարժման մէջ, և միակ ռէակցիօնէր տարրը, որի ձեռքով կարող է կատարել այդ արիւնոտ եղբայրասպան ընդհարումը և կասեցնել տալ ընդհանուր ազատագրական շարժումից, դա ներկայանում էր Թուրք տարրը, ուստի նրա ձեռքով էլ նա տուեց առաջին սիգնալը և հիմք դրեց հայ-Թուրքական կոտորածին, պատճառ դարձաւ նրա շարունակութեան:

Կոտորածի սիգնալը տրված էր: Բագւում մի քանի օրվայ մէջ հարիւրաւոր մարդկանց արիւն հոսեց, ահ ու սարսափահար եղած մասսան չէր կարողանում որևէ կերպ բացատրել, հաշիւ տալ կատարվածի համար: Մի քանի օրվայ մէջ հարիւրաւոր ընտանիքներ որբ մնացին, թալանվեցին ու աղքատացան: Ամեն մարդ որոնում էր Թուրքի ձեռքով սպանված իր սիրելիներին հողին յանձնելու. շատերը անյայտութեան մէջ կորած էին, իսկ շատերի դիակներն արդէն յօշոտված, գերեզմանատուն գրված էին. ոմանց դիակները այլանդակված լինելու պատճառով անկարելի էր լինում ճանաչել ու տէրերին յանձնել: Անցան կոտորածից մի քանի օր, ամեն ինչ խաղաղվեց, քաղաքը կրկին իր սովորական տեսքն ընդունեց: Սակայն վրդովված մտապատկերներով լիքը ու վրէժխնդրութեան հոգով լցված հայ և Թուրք մասսան չէր կարողանում հանգիստ մնալ, ամեն մարդ իր հասկացածի պէս էր բացատրում հայ-Թուրքական ընդհարումները և կոչ անում զինվել, անվերջ զինվել իրարից վրէժ լուծելու համար: Կոտորածին հետևեց գաղթականութիւնը. տգէտ Թուրք և հայ մասսան դիմեց դէպի գաւառները, հազարաւոր բանւորութիւնն ու գիւղացիութիւնը մի շաբաթվայ մէջ հեռացաւ Բագուից և ցրվեց գիւղերը: Տգէտ մասսայի համար մութն էր մնացել կոտորածի իմաստը. նա՝ փոխանակ հասկացնելու եղբայրասպան կռուի պատճառը ու վնասակարութիւնը իր ցեղակիցներին և համոզելու նրանց հաշտ ապրել ու չը խախտել խաղաղութիւնը, ընդհակառակը քարոզում էր վրէժ լուծել Բագւում սպանված արիւնակցի համար: Հայ և Թուրք մասսան մտաւ արիւնոտ ճանապարհը: Ուրականի պէս հետևող պրովօկատորը հասաւ իր նպատակին: Բագուն արձագանք տուեց գաւառները և ինքը մնաց ծածկված որոշ ժամանակ:

Տարածվելուն շատ նպաստեց նաև կովկասեան «ժամուլը». լրագիրների մէջ տպվում էին այնպիսի թղթակցութիւններ, որոնք միայն չափազանցութիւններ էին ու գրգռող: Մինչև օրս էլ այդ վնասակար ուղղութիւնը պահպանում են կովկասեան լրագիրները և նպաստում կոտորածի շարունակութեան, իսկ հաշտութեան անունով կազմված թափօրները, հայ և Թուրք հոգևորականութեան ու իշխանութեան առաջնորդութեամբ, այդ կեղծ ու օյինբազ հաշտութեան ձևը, նրանց փոխադարձ արտասանած ճառերը նպաստում էին երկու ազգերի մէջ աւելի ևս անվստահութիւն առաջ բերելուն ու թշնամութեան գաղափարը տարածելուն: Հաշտեցնում էին մէկին, որը երբէք չէ կռւել միւսի հետ:

Շէյթանի ծրագրից դուրս չէր նաև հայ-վրացական ընդհարումներ առաջ բերել Թիֆլիսում և ուրիշ տեղերում, սակայն ջուրն ընկաւ նրա ծրագիրը: Վրացի գիւղացիութիւնը ու բանւորութիւնը, շնորհիւ սոց.-դեմոկրատական պրոպագանդայի, հասել էր քաղաքական հասունութեան, որը գիտակցում էր Ռուսաստանի քաղաքական մոմենտը. վրացի պրօլետարիատը ոչ թէ նպաստեց պօգրօմներ ստեղծելուն, այլ նա իր ույժով միացաւ Ռուսաստանի ազատագրական մեծ շարժման հետ և իր կռիւը ուղղեց դէպի բիւրօկրատական կառավարութիւնը:

«Պետական Դումայի անդամ Ուրուսովի յայտարարութիւնից պարզ երևաց ու հաստատվեց, որ պօգրօմների հեղինակը ոստիկանութեան դեպարտամենտն է»:

Ճիշտ տարի ու կէս է անցել այն օրից, երբ առաջի սիգնալը տրվեց հայ-Թուրքական ընդհարումներին Բագւում, ուր կատարվեց առաջին անդրանիկ ու եղակի ակտը Կովկասում:

Սակայն հազիւ է անցել Բագուի կարմիր օրերից ինը ամիս, որից յետոյ կատարվում է մի ուրիշ հակապատկեր ու գիտակցական «ակտ». դա Թուրք պրօլետարիատի գիտակցական մասնակցութիւնն է ընդհանուր գործադուլներին: (Ճիշտ է նա անցեալումն էլ մասնակցել էր գործադուլներին, սակայն նրա մասնակցութիւնը ամբոխային էր և ոչ կազմակերպված ու գիտակցական): Բանւորական միջավայրը, որի մէջ գտնվում է Թուրք բանւորութիւնը, շփվելով հայ, ռուս և այլ ազգի բանւորների հետ և ենթարկվելով սոց.-դեմոկրատների զօրեղ պրոպագանդային, գիտակցութեան հասաւ և զգաց անցեալի սխալը: Շնորհիւ սոց.-դեմոկրատիայի զօրեղ պրոպագանդայի ու մեծ գաղափարի, որը գիտակցեց Թուրք ընկերը, ձեռք ձեռքի տուեց նախընթաց օրվայ իր թշնամի հայ ընկերոջ հետ ու կռիւ յայտարարեց ընդհանուր թշնամու դէմ: Թուրք ընկերը այս անգամ բացարձակապէս իր զէնքը ուղղեց ոչ թէ միայն օտար կապիտալիստների դէմ, այլև իր արիւնակցի՝ Թուրք կապիտալիստների դէմ: Նախընթաց կարմիր օրվայ Թուրք հերոս բէգերը ու Թագիևները իրանց արժէքը կորցրել են մասսայի աչքում, նրանց հլու հպատակ Թուրք բանւոր զինւորները այլևս չեն հրապուրվում նրանց խօսքերից, և ընդհակառակը՝ թշնամու դէմ գործ դրած զէնքը ուղղել են արիւնակիցների դէմ: Կեանքը փոխեց ամենայն ինչ. այնինչ մի օր առաջ լաւ էր նա այսօր վատ է:

Թուրք բանւորութեան առաջադիմութեան նշաններից մէկն էլ այն է, որ Բագւում հրատարակվեց հայերէն և Թուրքերէն մի լրագիր «Կոչ-Դէվէթ» անունով: Ջերմ կերպով մասնակցում էին լրագրի հրատարակութեանը Թուրք և հայ ընկերները: «Կոչ-Դէվէթի» հրատարակութեան նպատակն էր Թուրք և հայ բանւորին գիտակցել տալ ներկայ քաղաքական մոմենտը, բացատրել բանւորին իր դասակարգային շահերը և համախմբել սօցիալ-դեմօկրատիայի դրօշի տակ՝ զանազան ազգերից կազմված, սակայն շահերով կապված պրօլետարիատ դասակարգը: Սօցիալ-դեմօկրատիայի գործ դրած ջանքերը պսակվեցին աջողութեամբ:

Թուրք մասսայի մէջ կատարված փոփոխութիւնը ցոյց է տալիս, որ հորիզոնը կարմրագնել է և մօտ է արշալոյսին: Ուստի Բագուն լինելով միակ տեղը, ուր մեծ թւով կան հայ և Թուրք բանւորներ, պէտք է սօցիալ-դեմօկրատիան աշխատի յեղաշրջել, կերպարանափոխել նրանց մտածողութեան եղանակը, պատրաստված ուղարկել գաւառները քարոզելու եղբայրասպան պատերազմի վնասակարութիւնը: Ինչպէս Բագուի բանւորութիւնը տգիտաբար, առանց հասկանալու գնաց գաւառները և քարոզեց եղբայրասպան պատերազմը և տուեց առաջին սիգնալը, այնպէս էլ այսօրվայ գիտակցութեան հասած Թուրք և հայ բանւորութիւնը, գնալով գաւառները, կը տայ և հայ-Թուրքական ընդհարման վերջին սիգնալը:

Ուստի սօցիալ-դեմօկրատ կուսակցութիւնը պէտք է հայ-Թուրքական ընդհարումները ճանաչէ որպէս մեռնող ռէժիմի վերջին կռիւը, որի նպատակն է հայ-Թուրքական ընդհարման միջոցով ջլատել ույժերը և կասեցնել տալ հայ և Թուրք պրօլետարիատին ազատագրական մեծ շարժումից:

Ի նկատի ունենալով որ Բագուի Թուրք և հայ բանւորութիւնը աւելի շուտ ենթարկվում է սօց.-դեմօկրատիայի պրոպագանդային և մտնում է այդ դրօշի տակ, որպէս անշահասէր ու եղբայրացնող միջազգային կուսակցութիւն, ի նկատի ունենալով որ միակ և փրկարար, խաղաղացնող ու հաշտեցնող միջոցն է հանդիսանում հայ-Թուրքական ընդհարումներին վերջ տալու համար հայ և Թուրք մասսայի դասակարգային գիտակցութիւնը, որը ձեռնհաս է տալու միմիայն սօց.-դեմօկ. կուսակցութիւնը, ի նկատի ունենալով, որ սօց.-դեմօկրատիայի «ակտիվ» գործունէութիւնից է կախված Թուրք և հայ բանւորութեան ջերմ մասնակցութիւնը սօց.-դեմօկ. կուսակ. մէջ, ի նկատի ունենալով, որ հայ-Թուրքական ընդհարումներից վնասվում են հայ և Թուրք պրօլետարիատի դասակարգային շահերը և վնասում ընդհանրապէս սօց.-դեմօկրատական աջող գործունէութեանը, ուստի սօց.-դեմօկ. կուսակցութիւնը պէտք է անպատճառ հայ-Թուրքական ընդհարումները ճանաչէ իբր սեփական անմիջական գործը, պէտք է նա ձեռք առնէ միջոցներ դադարեցնելու հայ-Թուրքական ընդհարումները: Հետևապէս սօց.-դեմօկրատիան պէտք է «ակտիվ» կերպով արտայայտվի իր ամբողջ ույժով ընդդէմ պօգրօմներ ստեղծողների, ինչով որ կարող է, ժամանակի ու պայմանների համաձայն:

Ար. Զուլալեցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, նոյեմբերի 11-ին

«Մշակ»-ի 247 №-ում պ. Հաղպատեցին նոր զրպարտութիւն ու ինսինուացիա է աւելացնում հների վրա:

Ես աւելորդ և անյարմար եմ համարում պատասխանել պ. Հաղպատեցուն, քանի որ իմ ու նրա բանակռիւը պէտք է վերջացած համարվի այն օրից, երբ մենք փոխադարձ համաձայնութեամբ մեր վէճը յանձնեցինք քննելու միջնորդ դատարանի:

Իմ պատասխանը պ. Հաղպատեցուն ես կը տամ միջնորդ դատարանում:

Տ. Յովհաննիսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նոյեմբերի 10-ին Փոխարքայ կոմս Վօրօնցօվ-Դաշկօվի ընտանիքը այցելեց Բաշինջաղեանի պատկերասրահը:

—

Կովկասի Փոխարքայի դիւանատունը նիւթեր է հաւաքում Կովկասում զեմստվօ մտցնելու համար և դասաւորում է այդ նիւթերը սիստեմատիքական կարգով: («Кавк.»)

—

Թիֆլիսի ժամանակաւոր գեն.-նահանգապետի կարգադրութեամբ զինուորա-դատական դատի են ենթարկված՝ 1) Սարգիօն Սիմսարիշվիլին Անդրկովկասի երկաթուղու երթևեկութեան կառավարիչ Գ. Է. Բերնդտին սպանելու համար, 2) Անիսիմ Սվանիձէն, որը մեղադրվում է իշխանութեանը ընդդիմադրելու մէջ, Գէօրգիյ Խասանաշվիլին և Իվան Աւալիձէն, որոնք մեղադրվում են Իվան Դավիդօվի վրա աւազակային յարձակում գործելու մէջ: («Кав.»)

—

Թիֆլիսի քաղաքային դումայի ձայնաւոր Լէնչևսկին յայտարարութիւն է ներկայացրել—իրանից ձայնաւորութեան կոչումը վերցնելու համար:

—

Նոյեմբերի 10-ին Թիֆլիսի նահանգական դատարանում քննվել է ուսանող իշխան Լէվան Խերխէուլիձէի սպանութեան գործը: 1905 թ. յուլիսի 12-ին, երբ Թիֆլիսի ոստիկանապետը անցնում էր Օլգինսկի փողոցով, նետվում է մի ռումբ, որից Կովալէվը վիրաւորվում է: Ռմբաձիգ չարագործը անմիջապէս բռնվում է տեղում և պարզվում է, որ իշխան Լէվան Խերխէուլիձէն է: Իմանալով Կովալէվի վիրաւորվելու մասին, ուղեկցող Ալեքսա Խաչտերով պահակը ժամանելով 1-ին թաղամասի ոստիկանատունը, ուր այդ րոպէին Խերխէուլիձէն է եղել, հարցրել է նրանից—թէ նա՞ է արդեօք կամեցել ոստիկանապետին սպանել: Խերխէուլիձէն պատասխանում է. «ես եմ, այո, բայց ինչ քո գործն է»: Այն ժամանակ Խաչտերովը մերկացնելով սուրը, երկու վէրք է հասցնում Խերխէուլիձէին, որոնցից նա մեռնում է 1906 թւի յուլիսի 16-ին: Մեղադրվող Խաչտերովը խոստովանել է իր մեղապարտութիւնը և բացատրել է, որ նա իմանալով ոստիկանապետի վիրաւորվելու մասին, շտապել է Օլգինսկի փողոցը և մտել է անմիջապէս դեղատուն, ուր փաթթել է Կովալէվի վէրքերը և միայն դեղատանն է լսել, որ առաջ մտել է ոստիկանատուն և հարցրել է Խերխէուլիձէին՝ թէ նա՞ է սպանել ոստիկանապետին, իսկ երբ բռնվածը ասել է «դու ինչ ես ուզում ինձանից, ես սպանեցի», —հանել է սուրը և մէկ անգամ հարվածել է բռնվածին: Խաչտերովը 27 տարեկան է. նրան պաշտպանել է երդուեալ-հաւատարմատար Ս. Արծրունին: Դատարանը մեղաւոր է ճանաչել Խաչտերովին իշխան Խերխէուլիձէի սպանութեան մէջ և վճռել է. զրկել բոլոր իրաւունքներից և արտօնութիւններից և յանձնել ուղղիչ բանտարկեալների բաժինը 3 տարով: Ի նկատի առնելով մեղմացուցիչ հանգամանքները՝ միջնորդել արդարադատութեան պ. մինիստրի միջոցով, պատիժը փոխարինել 6 ամիս բանտարկութեամբ:

—

Այսօր, կիրակի, ցերեկվայ ժամը 11-ին տեղի է ունենալու զինւորական բժիշկների նոր բացած հիւանդանոցի օծումը և օրհնումը. ընդունելութիւնը սկսվելու է նոյեմբերի 1-ից. հիւանդանոցը գտնվում է Մեծ-Վանքի փողոցում, Կուզնօվի տներում:

—

«Երկրի» նախորդ համարներից մէկում տպված էր որպէս թէ Եալտայում բնակող Աւետիս Յարութիւնեանը չէ կամենում այլևս «Մշակ» ստանալ: Այժմ մեր խմբագրատունը բերին մի մասնաւոր նամակ Եալտայից, գրված նոյեմբերի 8-ին, որով յիշեալ Աւետիս Յարութիւնեանը յայտնում է, որ «Մշակի» խմբագրութիւնը չը դադարեցնէ լրագիրը և շարունակէ ուղարկել:

—

Քութայիսի նահանգից հաղորդում են, որ մօտ օրերս Աբասթումանի գիւղի մօտ գտնված է իշխանութիւնից խուսափող ազնուական Մուխրանի Մէունարիայի սպանված դիակը, որը փաթթած է եղել խաւիծի մէջ: Կատարած քննութիւնը պարզել է, որ սպանվածը կենդանի ժամանակ պարապել է անասնագողութեամբ և դատարանին էր յանձնված Կուտուկերիա գիւղացու գոմէշները գողանալու և Նոկօ Դադարզելիայի տան վրա յարձակվելու համար: Բացի դրանից նրան հետամուտ են եղել գեներալ-նահանգապետի հրամանով:

—

Սոց.-ֆեդերալիստների և սոց.-յեղափոխականների կազմակերպութիւնները Քութայիսի նահանգում մինչև Պետական Դումայի առաջիկայ ընտրութիւնների վերջանալը բլոկ են կազմել: (Черн. Вѣст.)

—

Նոյեմբերի կէսից կը սկսէ լոյս տեսնել զեմստվային յայտնի գործիչ Մ. Ն. Շչեպկինի խմբագրութեամբ «Самоуправленіе» (ինքնավարութիւն) շաբաթաթերթը, որը նուիրված կը լինի տեղական ինքնավարութեան հարցերին այդ խօսքի լայն մտքով: (Знаніе)

—

Նոյեմբերի 8-ին, ցերեկվայ ժամը 1-ին, Բագւում «Метрополь» հիւրանոցի մօտ հրացանաձգութիւն տեղի ունեցաւ, որը սաստիկ երկիւղի մէջ ձգեց տեղական բնակիչներին: Դէպքը հետևեալն է. մի ինչ որ Գրիգորեանց ուղղակի փողոցում բաւարարութիւն էր տալիս իր բնական պահանջին. նրան մօտեցաւ դիրքի վրա կանգնած գօրօդօվօյը և հրամայեց դադարեցնել այդ, մատնանշելով, որ այդ վարմունքը անվայել է, բայց երևի, ոչ բաւականաչափ քաղաքավարի ձևով, որի պատճառով նրանց միջև վէճ ծագեց. մեղադրվողին արդարացնելու համար հասան մի քանի մասնաւոր մարդիկ, իսկ գօրօդօվօյին օգնութեան հասան գօրօդօվօյներ. այդ միջոցին մասնաւոր մարդկանցից մէկը գօրօդօվօյների վրա 1 անգամ կրակեց և, այդպիսով, ամբոխի և գօրօդօվօյների միջև հրացանաձգութիւն տեղի ունեցաւ, որի ժամանակ վիրաւորվեցին 3 հոգի՝ Մկրտիչ Բաղդասարեան, Թէոս Գրիգորեան և Ալէքպէր Մեշադի-Դադաշ-օղլի, որոնց տարել են Միքայէլեան հիւանդանոցը բժշկելու համար: Կողմնակի անձերից ձերբակալված են 3 հոգի: «Баку»

—

Նոյեմբերի սկզբին Քութայիսի գաւառի Եգվրի գիւղում գիւղացի Իլիա Զարնաձէն և երեք անյայտ չարագործներ գնում են տանուտէրի օգնական Վլադիմիր Զարնաձէի տունը: Չը գտնելով վերջինին տանը, նրանք նրա տան վրա 4 անգամ կրակելով հեռանում են: Շուտով նոյն տունն է գալիս տանուտէր Կրավիշվիլին պահակների ուղեկցութեամբ: Այդ րոպէին, տանուտէրի օգնականի տան մառաններում թաքնված չարագործները և Իլիա Զարնաձէն յարձակվում են Կրավիշվիլու և նրա հետ եղող պահակների վրա, որով խլում առաջնից ատրճանակը, իսկ վերջիններից, փողերը: Կրավիշվիլին կարողանում է անմիջապէս փախչել չարագործներից, որոնք նրա ետևից մի քանի անգամ ատրճանակ են պարպում: Եռանդուն միջոցներ են ձեռք առնված չարագործներին բռնելու համար:

—

Սուխումի վիճակից գրում են, որ նոյեմբեր ամսի սկզբին 8 զինված փախստական յանցաւորներ Արսէն Շոնիայի և Դուր Միկիայի առաջնորդութեամբ յարձակվել են Սաբէրին գիւղի մօտ գիւղացի Դժալիի վրա կողոպտելու նպատակով: Դժալը և նրա ընտանիքը ծանր կերպով ծեծվել են: Յանցաւորները փախել են:

—

Սուխումի վիճակում, Զօգա գիւղացի Սանդրօ Պատարիայի վրա յարձակվել են երկու զինված չարագործներ և խլելով 46 ր. 60 կ. անյայտացել են:

—

Բագու կայարանից գրում են, որ նոյեմբերի 10-ին կայարանի 1-ին կարգի դահլիճում յանկարծակի վախճանվում է ինժ.-տեխնոլոգ Խալիլ Բէգ Բէնգլիանով Խաբորկովը: Դիակը տարված է Բագուի երկաթուղային հիւանդանոցը։

—

Թէլաւի գաւառից մեզ հաղորդում են, որ Նորգավազի գիւղում մօտ օրերս այրվել է Դաւիթ Բեժաղաշվիլու. Չրաղացը մինչև վերջին Թելը։ Ջրաղացի հետ միասին այրվել նաև իմերել Եվկտիա Քուրասանիձէն։

—

Թիֆլիսի ժամանակաւոր գեներալ-նահանգապետի հրամանով ելէքտրաքարշի ծառայող Ըէվազիձէն Սիբիր է աքսորված—ելէքտրաքարշի ծառայողների մէջ պրօպագանդա մղելու համար։

—

Գեներալ Գրիպպենբէրգի գործը—Նրա՝ գեներալ Կուրօպատկինի հետ տարաձայնութիւնների վերաբերեալ, ընդունում է առաջինի համար աջող կերպարանք։ Գեներալ շտաբի գերութիւնից վերադարձած օֆիցէրների տուած ցուցմունքները հաստատում են, որ Սանդէպուի մօտ ռուսների դրութիւնը այնքան օգտաւէտ էր, որ միանգամայն արդարացնում էր գեներալ Գրիպպենբէրգի վճիռը՝ դիմել յարձակման։ Եապօնացիները կռիւը տանուլ տուած էին համարում և այդ պատճառով էլ պատրաստութիւններ էին տեսնում յետ նահանջել իրանց գրաւած դիրքերից։ Ընդհանրապէս գեներալ Գրիպպենբէրգի ձեռք առած բոլոր միջոցները Սանդէպուի կռուի ժամանակ համարվում են լիովին համապատասխան նրան հպատակ զօրքերի դրութեան։ Մի շարք ցուցմունքները կասկած են թողնում, որ գեներալ Գրիպպենբէրգը բոլորովին պատւով է դուրս գալիս իր վրա դրած մեղադրանքներից։

—

Նոյեմբերի 10-ին կայացաւ քաղաքային վարչութեան և քաղաքային ապաստարանների յանձնաժողովի խառն նիստը, որտեղ կայացան հետևեալ վճիռները՝ 1) գիշերօթիկներին սոյն ամսի 15-ից տալ թէյ. 2) ապաստարանի կառավարչին թոյլ տալ ժամանակաւոր վարել ապաստարանից դուրս էլ պաշտօն, եթէ այդպիսին ներկայանալու լինի նրան և 3) բանալ այս ամսից նախկին Պապկովի (այժմս քաղաքային) տանը առաջին քաղաքային ապաստարանը, որը անցեալ տարուայ հայ-թուրքական անկարգութիւնների պատճառով փակվել էր, կատարելով նախօրէն հարկաւոր կարկատանները։

—

Բանկային լաւատեղեակ աղբիւրներից «Сегодня» լրագրին հաղորդում են, որ Բագւի շրջանի նաւթաբեր հողերը արտասահմանեան կապիտալիստներին ծախելու հարցը մօտ օրերս վերջնական լուծումն է ստացել և շատ շուտով աւելի բէալ ձև կը ստանայ։ Յոյս կայ, որ այդ վաճառքը կը փոխարինէ այն փոխառութեանը, որ մինչև օրս էլ չէ աջողվում կայացնել կառավարութեանը։

—

Անցեալ հոկտեմբեր ամսվայ ընթացքում Չելեաբինսկի վրայով Սիբիր են անցել 1,476 գաղթական ընտանիքներ՝ 8053 երկսեռ հոգուց բաղկացած, և բացի դրանցից, 5792 պատուիրակներ։ Նոյն ժամանակամիջոցում Սիբիրից վերադարձել են 153 ընտանիքներ, 1315 երկսեռ հոգուց բաղկացած և 3504 հոգի պատուիրակներ։

—

«Ռուս. Հեռ. Գործ.» յունվարի 1-ից վերջ է տալիս իր գործունէութեանը։ Այդ մասին գործակալութիւնը արդէն յայտնել է ի գիտութիւն իր արտասահմանեան գործակալներին։ Գործակալութեան ներկայ ղեկավարներ Սաբանինը և Շոյցը վճռել են առանձին հեռագրական գործակալութիւն հիմնել, որին մասնակցելու են «Ռուս. Գործ.» բոլոր ոյժերը։

—

Ի նկատի առնելով, որ Տաւրիկեան պալատի վերանորոգութեան աշխատանքները արդէն վերջանալու վրա են, նրա պահպանների թիւը ուժեղացված է։ Պալատի ծառայողների թիւն ևս աւելացված է։ («Стр.»)

—

«Страна» լրագիրը հաղորդում է. «Ֆաբրիկանտների և գործարանատէրերի համագումարը, որ պէտք է տեղի ունենար մօտ ապագայում գործադուլների դէմ մաքառողական դաշնակցութիւն կազմելու հարցը մշակելու համար, յետաձգված է մինչև Պետական Դումայի ընտրութիւնների վերջանալը։ Ներկայումս արդէն մի քանի առանձին արտահանութեան ճիւղերի ֆաբրիկանտների և գործարանատէրերի մէջ այդպիսի դաշնակցութիւններ կազմակերպվել են»։

—

ԷՋՄԻԱԾՆԻՑ մեզ գրում են. «Տպարանական վարչութիւնս խնդրում է ուղղել ձեր լրագրի № 243-ի սխալը։ Տպարանական ժողովի անդամների մէջ Մեսրովբ աբեղայ չը կայ. այդ ոչինչ, սակայն միաբանութեան անունով խօսող Ա.-ն պէտք է հրապարակով խոստովանվի, որ նոյն իսկ միաբանութեան շարքում Մեսրովբ աբեղայ գոյութիւն էլ չունի»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

10 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 նոյեմբերի։ Պրոֆէսոր Նէստոր Կոտլեարէվսկին ընտրված է Գիտութեանց Ճեմարանի մատենագրութեան և գեղարուեստի բաժնի պատուաւոր ակադէմիկ։—Լեհական Թագաւորութեան մէջ զէմստվօ մտցնելու մասին խորհրդակցող ժողովը, Գերբէլի նախագահութեամբ, վերջացրել է իր պարապմունքները։ Արձանագրութիւնները ստորագրվել են։ Նախագահի առաջարկին՝ խօսել երկսատիճան զէմստվօ մտցնելու մասին կառավարչական նախագծի համաձայն՝—տեղական ազգաբնակութեան ներկայացուցիչները պատասխանել են, որ անհրաժեշտ է մտցնել եռաստիճան զէմստվօ իրանց նախագծի համաձայն, բայց կառավարչական ծրագրի առաջարկած 2 նախագծերից, գմինի և նահանգական, կամ գմինի, գաւառական և նահանգական, օգտակարը առաջինն է։—Ազատ վերածնութեան կուսակցութեան Պետերբուրգի կենտրոնական կոմիտէի կազմի մէջ մտել են նաև Հէյդէնը, Բատալը, Եֆրեմովը,—Ներ- [illegible]

որ պետական գինու պահեստները ըստ յատկութեան իրանց գործողութիւնների մէջ չունեն գործարանա-գավոդային բնաւորութիւն, ուստի և նրանց բանուորները Պետական Դումայի ընտրութիւններին մասնակցել չեն կարող։

ՎԱՐՇԱՎԱ, 10 նոյեմբերի։ Երէկ, Գուրչէվսկի փողոցում, երեկոյեան մօտերը յեղափոխականները կրակել են ոստիկանական պահակախմբի վրա. վիրաւորված են երեք ոստիկան։ Չարագործներից մի քանիսը ձերբակալված են։

ՕԴԵՍՍԱ, 10 նոյեմբերի։ Ուսանողների և ազատ ունկնդիրների վրա տեղի ունեցած յարձակումը տեղի է ունեցել երեկոյեան դասախօսութիւնից փողոց դուրս ելնելու ժամանակ։ Երիտասարդների ամբոխը, զինված մահակներով, պահանջել է, որ ուսանողները գնան առանց խմբերի։ Երբ ուսանողները հրաժարվել են հնազանդվել այդ պահանջին, ամբոխը սկսել է ծեծել նրանց։ Ուսանողները սկսել են դէս ու դէն փախչել, շատերը թաքել են մօտից անցնող ձիաքարշը և այդպիսով մի կերպ գլուխները ազատել։ Վնասվածներին անմիջական օգնութիւն է հասցրել մօտակայ դեղագործը։

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ, 10 նոյեմբերի։ Երէկ Վիլմանստրանդի բանտի 120 բանտարկեալները սկսեցին յուզվել և անկարգութիւններ անել—խիստ վերաբերմունքի և ծխախոտ ծխելու արգելքի պատճառով։ Քաղաքացիական իշխանութիւնները անմիջապէս զօրքեր պահանջեցին։ Կարգը այժմ վերականգնած է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 նոյեմբերի։ Համակայսերական եկեղեցական համագումարում քննվեց այն հարցը՝ թէ, արդեօք, միտրապօլիտութիւնը պէտք է ադմինիստրական-դատաստանական կենդրօն լինի, թէ միայն եպիսկոպոսների ժողով—հովուապետի (?) բնաւորութեամբ։ Առաջին կէտի օգտին ձայնակցել են 15, երկրորդին՝ 22 հոգի։

ՎԻԵՆՆԱ, 10 նոյեմբերի։ Րէյխսրատում, ընտրողական բարենորոգման հարցը քննելու ժամանակ, Ռոմանչուկը ռուսինների անունից գանգատվում է այն ճնշման դէմ, որ գործում են լեհերը ռուսինների վրա Գալիցիայում, բողոքում է օրինագծի դէմ, որը վաւերացնում է Գալիցիայում ապրող լեհերի արտօնեալ դրութիւնը, ասում է, որ հաւասարութեան համար գահի բարձունքներից տուած խոստումները չեն իրագործված։ Ռուսինները, որոնց բնութեամբ կապեցին Աւստրիային, չեն ճանաչում րէյխսրատի այդօրինակ ամօթալի վճիռները։ «Մենք—շարունակում է Ռոմանչուկը,—այլևս չենք մասնակցի բարենորոգման յետագայ խորհրդակցութիւններին»։ Ճառից յետոյ ռուսին պատգամաւորները հեռանում են դահլիճից. իսկ րէյխսրատը ընդունում օրինագծի 6-րդ բաժինը։

ԼՕՁ, 10 նոյեմբերի։ Պօզնանի գործարանը փակված է. մօտ 7000 բանուորներ մնացել են պարապ։

ՓԱՐԻԶ, 10 նոյեմբերի։ Պատգամաւոր Դրէյօնը մի առաջարկութիւն է արել—վերացնելու զինուորական նաւերը խաղաղ ժամանակ։

11 նոյեմբերի

ՄՈՍԿՎԱ, 10 նոյեմբերի։ Բօնակէրի գործարանը կողոպտելու համար պատերազմադաշտային դատարանը Դանչինին դատապարտել է կախաղանի, իսկ Դրօժինին, 15 ամեայ աքսորի։

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՎՍԿ, 10 նոյեմբերի։ Իվանովօ քաղաքի շրջանային վարչութեան գանձարանը կողոպտելու համար չորս գիւղացիք հրացանազարկվել են պատերազմ-դաշտային դատարանի վճռով։

ՓԱՐԻԶ, 10 նոյեմբերի։ Պալատն ընդունեց պատգամաւորների պալատի անդամների վարձատրութիւնը 15,000 բուբլու հասցնելու համար առաջարկած օրինագիծը։

ՆԻՒ-ԵՈՐԿ, 10 նոյեմբերի։ «Օրինօքօ» նաւը գիշերով ընդհարվել է Նիւ-Եօրկ եկող «Վիլհէլմ-դէ-Գրօսէ» նաւի հետ։ «Վիլհէլմի» վրա սպանվել են 5 հոգի, վիրաւորվել 10-ը։ «Օրինօքոյից» անյայտ կորել են 3 նաւաստիներ։

ԼՕՆԴՕՆ, 10 նոյեմբերի։ Համայնքների պալատում Գրէյը արած հարցապնդման յայտնել է, որ Ռուսաստանը հրաժարվում է վճարել «Ալանտօն» նաւատիրոջ վնասները, և բրիտանական կառավարութիւնը գտել է, որ ի տես չը կան բաւականաչափ փաստեր բողոքը պաշտպանելու համար։

ԻՐԿՈՒՏՍԿ, 10 նոյեմբերի։ 9-ին, երեկոյեան ժամը 6-ին, մի աւազակախմբի ձեռքով կողոպտված է Իրկուտսկի գաւառի Կուլտուկի պօստային բաժանմունքը. գողացված է 14,000 ր.։ Ձեռք են առնված եռանդուն միջոցներ։

ՐԻԳԱ, 10 նոյեմբերի։ Գեներալ-նահանգապետ Մէլլէր-Զակոմէլսկին պատժիչ զօրախմբերի կառավարիչներին հրամայել է այլևս մարմնական պատիժ չը տալ, չայրել դաստակերտները և շինութիւնները։ Այլ այդ բոլորի փոխարէն յանցաւորներին յանձնել պատերազմա-դաշտային դատարանին։

ԼՕՆԴՕՆ, 10 նոյեմբերի։ «Թայմսի» Պեկինի թղթակիցը հաղորդում է, որ սեպտ. 9-ին ափիոն վաճառելը արգելելու համար կայացրած որոշումը կայսրը հաստատել է արդէն։ Օրէնքը արգելում է խանութներ բանալ ափիոն վաճառելու համար. ցուցակագրվում են ափիոն գործածողները. կառավարութիւնը արձակած է պաշտօնեաների, դատաւորների և ուսանողների—ափիոն գործածելու համար։

ՎԻԵՆՆԱ, 10 նոյեմբերի։ Հրատարակված է, որ ֆելդմարշալ Բեկ(?)-ի Գէտցէնդօրֆը նշանակվում է գեներալ շտաբի կառավարիչ։

ՉԻՏԱ, 10 նոյեմբերի։ Գեներալ-նահանգապետի հրամանով արձակված են արական գիմնազիայի 1-ին 4 բարձր դասարանների սաները գործադուլի համար։

ՐԷՎԷԼ, 10 նոյեմբերի։ Վէյսէնշտէյն գաւառի նորակոչ զինուորները Թագաւոր Կայսրին մի հեռագիր են ուղարկել, որի մէջ ի միջի այլոց ասված է. «Աշխատենք երդմանը հաւատարմութեամբ ապացուցել, որ էստէնցիներն այս ցուրտ և սառը երկրում կան շատ և շատ սրտեր, որ վառ և կենդանի սիրով բաբախում են Հայր-Կայսրի և թանգագին հայրենիքի համար»։ Զինուորական մինիստրից հրամանատարը պատասխան է ստացել, որ այդ ամենահպատակ հեռագրի վրա կայսրը [illegible] մունքների և պատուաւոր կերպով ծառայելու մտադրութեան համար»։

ՄՈՍԿՎԱ, 10 նոյեմբերի։ Հոկտեմբերի 17-ի դաշնակցութեան քաղաքային խորհրդի կազմի մէջ մտան բայօնական կօմիտէների նախագահները։ Կայանում են հասարակական ժողովներ։ Վիտէբսկում նոյեմբերի վերջերին տեղի կունենայ գաւառական կազմակերպութիւնների համագումարը՝ թեկնածուներ որոշելու Պետական Դումայի համար։ Նիկոլաևում կազմվում է դաշնակցութեան բաժին, Լէպիչէվում բացվում է խաղաղ վերածնութեան բաժին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ

ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880

(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերի

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) մեզասեռ. հ.։

Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Մ. Գ. ԱԻԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժու. իւն։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Ի. Կ. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇԶՆՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։

Գ. Յ. Գուրգենով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Մ. ՓՈՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.։

Վճարը 50 կ.։ չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ

Մ. Պ. Զախարբէգեանց

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝

ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋՂԱՅԻՆ

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւնը { առաւ. 10—12 ժ.
երեկոյեան 6—7 ժ.

Տէլէֆօն № 1087

Սօլօլակ, Լերմոնտովսկայա փող., 16.

(ա. օ.) 52—150

ԲԺԻՇԿ

Լևոն Օհանջանեան

Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կազբեկսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կազբեկսկի փողոցից № 2.

(ա. օ.) 272—300

ԲԺԻՇԿ

Ա. Միքիթարեանց

Մասնագէտ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 10—12, երեկոյեան 6—8։ Կանանց համար 12—1 ժամը։

Սօլօլակ, անկիւն Բէհբութեան և Պասկևիչի փողոցների,, № 33/15։

(ա. օ.) 52—100

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

Մասնագէտ ներքին և երեխայոց հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առաւ. և 5—6 երեկ.

Միխայլովսկի պր. տ. Ճավճանիձէի № 36

(կ.չ.ու.) 22—100

ԸՆՏԻՐ ԸՆԹԵՐՑԱՆԵԼԻ ԳՐՔՈՅԿՆԵՐ

1. «Սիրտ» գրքից 9 պատմ.	գերման.	40 կ.
2. Ժամանակը ոսկի	պատկեր.	40 »
3. Քաջ Աղասի		25 »
4. Սասունցի Դաւիթ	պատմ.	30 »
5. Խուլ Խաչիկ	վէպիկներ	25 »
6. Ծովինար		20 »
7. Շէն Թագաւորի աղջիկ		20 »
8. Երկու աղբերացեղ		30 »
9. Աստուած աղքատի կերպում		20 »
10. Անմեռ աշխարհ		8 »
11. Հէքիաթներ		30 »
12. Աստուած չը ճանաչող	պատկեր.	10 »
13. Գալօ Ափօ և Խաչան		12 »
14. Երկասիրութիւններ ա. կալուկ		50 »

Դիմել Թիֆլիսի գրավաճառներին, գումարով ցանկացողները իրան՝ Քամալեանց Ս.-ին, Ներսիսեան դպրոց։ (չ. ու. կ.) 19—20

ՀՐԱՒԷՐ

Նոյեմբերի 12-ին, կիրակի, առաւօտեան ժամը 12-ին Թիֆլիսի Կաթուղիկէ ս. Աստուածածնի եկեղեցումը ժողով է լինելու նոր երեցփոխան ընտրելու, ուստի յարգոյ ծխերը կրկին անգամ հրաւիրվում են ներկայ լինել յիշեալ եկեղեցումն ընտրութեանը մասնակցելու։

Գործակալ՝ Գրիգոր աւ.-քահ. Մանդակունի

(ու. կ.) 1—2

ՓՈՐՁՎԱԾ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ

Պատրաստում է աշակերտներ ու աշակերտուհիներ բոլոր միջնակարգ դպրոցների համար։ Ընդունում է նաև բնակարանով։ Հասցէն «Մշակի» խմբագրատուն։

(ա. օ.) 6—10

ԲԱՑՎԱԾ ԵՆ

ԿԱՀԱՒՈՐՎԱԾ ՍԵՆԵԱԿՆԵՐ

„ՊԱԼԷ-ՐՕՅԱԼ“

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Քաղաքի կենտրօնում, Դվօրցովայա փողոցի վրա, նոր տուն Սարաջեվի, նոր նորոգած, լաւ կահաւորված և լուսաւորվում է ելէքտրականութիւնով։

Գինը 75 կոպէկից մինչև 6 բուբլի օրական։ 1—10

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Կ. ԿԷՕՆՃԵԱՆ

Ընդունում է բերանի և ատամների հիւանդութիւն ունեցողներին. պատրաստում է արուեստական ատամներ, քիմք, քիթ և անդամահատված ծնօտների պրօթեզներ (Резекціонные протези).

Ընդ. ժամերը 9—2 առ. և 4—6 երեկ.։ Հասցէն՝ Վանքի փողոց, տ. № 10 (Բարօնսկայա փողոցի անկիւն)։

(ա. օ.) 1—30

ՄԱՔՈՒՐ ՀԱԼԱԾ ԻՒՂ

Մեծ քանակութեամբ բերած եմ Երևանի գաւառներից. ծախվում է չափաւոր գնով. հարցնել՝ Արմենանկի բազար № 44, մանրավաճառ Գեղէնօ Վիրապեանին։ (կ.) 1—1

ՀՐԱՒԷՐ

Կիրակի նոյեմբերի 12-ին, պատարագից յետոյ, առաւօտեան ժամը 11-ին, Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցում նշանակված է ծխական ժողով լսելու՝

Ծխական Հոգաբարձութեան մի ամեայ հաշիւը, և քննելու՝

1) Հոգաբարձութեան առաջարկութիւնը ս. Մարիամեան դպրոցի գոյութիւնը ապահովելու մասին,

2) Ապագայում ծխական ժողովներ հրաւիրելու հարցը կանոնաւորել։

Սրանով Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցուն պատկանող 21 տարեկանից բարձր բոլոր ծխականները—Վեհափառ Կաթուղիկոսի կոնդակների համաձայն—առանց սեռի և դասակարգի խտրութեան հրաւիրվում են մասնակցելու այդ ժողովին։

Ի դիմաց Ծխ. Հոգաբարձութեան՝

Երեցփոխ՝ Ստ. Մնացականեան

Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ

I

ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ

ՌՈՒՍԵՐԷՆԻՑ ՀԱՅԵՐԷՆ

Գինը 8 ր., կազմով 9 ր. 25 կ. կամ աւելի, նայած կազմին։

II

ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ

ՀԱՅԵՐԷՆԻՑ ՌՈՒՍԵՐԷՆ

Լոյս տեսաւ ԵՐԿՐՈՐԴ պրակը։ Ամբողջ բառարանի բաժանորդագինը 5 ր., առաջին բառարան՝ ի բաժանորդների և գնորդների համար 4 ր., Թիֆլիսում դիմել «Գուտտէնբերգ» գրախանութին, իսկ գաւառներից պէտք է ուղղակի հեղինակին դիմել. ТиФлисъ. А. Дагбашяну.

III

Գրպանի բառարան ռուսերէնից հայերէն։ Բաժանորդագինը 2 ր. 50 կոպ.։

(շ. կ. ե.) 2—3

Կ. ԱՖՐԻԿԵԱՆԻ

ՏՆԿԱՐԱՆՈՒՄ

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ

ամեն տեսակ պտղատու ծառերի պատուաստներ և նոյնպէս տունկեր էժանացրած գներով ծառացուցակներն ուղարկվում են ձրի ըստ պահանջման։

Հասցէն՝ Г. Гори, Тифл. губ. К. Θ. Африкіанъ.

(ե. հ. կ.) 9—15

Գանձակում տեղի ունեցած ընդհարումների պատճառով ես տեղափոխեցի իմ կենտրօնական ՀԻՒՐԱՆՈՑՍ շքեղ կահկարասիներով Թիֆլիս, Պուշկինսկի փողոցի վրա № 23, պրավօսլաւնի հոգևոր սեմինարիայի դիմաց

„ՆՈՄԵՐԱ ՑԵՆՏՐԱԼ“

մականունով։ Գները 70 կոպէկից մինչև 2 բուբլի։ Ամսական ցանկացողների հետ առանձին պայմաններով։

Ալէքսանդր Ցարութինով

(հ. կ. ե.) 36—100

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

„ՁԱՅՆ-ի“

7-րդ համարը հետևեալ բովանդակութեամբ.

Պետական Դուման:—Դաշնակց. և նրա հասարակ.-քաղաքական արժէքը:—Ինքնապաշտպանութիւնն էն պաշտպանում:—Բանուորի երգը (բանաստեղծութիւն):—Ռուսական յեղափոխութիւն:—Հին հարցի մասին (պրոֆեսոր [illegible]):—Չէզոք ենք:—Իմ [illegible] (Իշխանեան):—Ներքին [illegible] ծարանական կեանքից։

2—2

ԲԱՑ ՆԱՄԱԿՆԵՐ

«ԽՈՒԹՈՒԲԱԼԱ»-ԻՑ

18 տեսակ նկարներով, 100-ը 2 ր. 50 կոպ., 500-ը և աւելին հատը 2 կոպ. [illegible] պիա Գ. Մարիամեան, Պուշկինեան [illegible] Թիֆլիս։

2—2

[illegible]

Тифлисъ, Вельяминовская 24, В. Варданяну.

„ՎԱՂԱՐՇԱՊԱՏ“ [illegible]

ՀՐԱՒԷՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

ԿԱՐԼ ՄԱՐՔՍ

ԿԱՊԻՏԱԼ

ՀԱՏՈՐ I

Հայերէն լիակատար թարգմանութեամբ եւ հրատարակութեամբ Ստրասբուրգի համալսարանի պետակ. եւ իրաւաբ. գիտութիւնների դոկտոր

ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑԻ

սիրելի մեր մտաւորական ու քաղաքական ընկերոջ ամսից

Թարգմանութիւն գերմաներէն բնագրից, որը կազմում է մօտ 800 խիտ տպած մեծադիր էջեր՝ բազմաթիւ և մեծածաւալ ծանօթութիւններով և Մարքսի ու Էնգելսի չորս յառաջաբաններով։

Հատորը լոյս է տեսնելու 7 պրակներով՝ համաձայն հատուածների թւին, որոնց խորագրերն են՝

I—Ապրանք և փող (3 գլուխ), II—Փողի կապիտալ դառնալը (4 գլ.), III—Բացարձակ աւել-արժէքի արտադրութիւն (5 գլ.), IV—Յարաբերական աւել-արժէքի արտադրութիւն (4 գլ.), V—Բացարձակ ու յարաբերական աւել-արժէքի արտադրութիւն (3 գլ.), VI—Աշխատանքի վարձը (4 գլ.), VII—Կապիտալի կուտակման պրօցէսը (5 գլ.)։

Ծանօթ. Գիրքը, բացի թէօրիական նուրբ անալիզներից, պարունակում է նաև անտեսական զարգացման տնտեսութիւններ, գլխաւորապէս անգլիական կեանքից, որպէս տնտեսական ամենապարզված երկրից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ է 3 բուբլի 50 կոպ. (=9 ֆրանկ) պօստի ծախքով միասին՝ այժմեանից մինչև առաջիկայ դեկտեմբերի վերջը բաժանորդ գրվողների և գինը վճարածների համար։ Գիրքը լոյս տեսնելուց յետոյ՝ գինը զգալապէս կը բարձրացվի։

Բաժանորդագրութեան համար դիմել՝ Тифлисъ, книжная торговля «Гуттенбергъ» կամ հրատարակչին՝ Тифлисъ, А. М. Арасханянцу, Кадетскій пер. 11։ Արտասահմանից՝ Tiflis (Russie, Caucase), Librairie «Guttenberg» և կամ Tiflis, A. M. Araskhanianiz, Kadetski péréoulok 11.

Ամեն բաժանորդ՝ թէ Թիֆլիսից և թէ այլ տեղերից՝ կը ստանայ անդորրագիր։

(կ. հ.) 20—20

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ս. Գ. Շերմազանեան

Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը։ Երևանեան հրապարակ, տ. Պուրգէնովի № 7. պոդեզ նոտար Միքրովի։

(Ա.Հ.Հ.) 76—100

ՏՐՎՈՒՄ Է

մէկ կամ երկու սենեակ վառելիքով, լուսաւորութիւնով և ծառայով. ցանկացողներին տրվում է նաև ՃԱՇ։ Նոյն տանը ընդունվում են ՆԱԽԼԵՐՆԻԿՆԵՐ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ են աշակերտներ մինչև III դասատուն։ Նոյն տանը պարապում են հայոց լեզուով։ Հասցէն՝ 5-ая Норашенская ул. № 6։ 2—4

ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ

Ընդունում եմ պատուէրներ կանանց և երեխայոց զգեստների, մաշուկի ձևերով։

Հասցէն՝ Церковная ул., № 14, 9-й уч.

Լոյս տեսան

Մ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆԻ

1907 Թ. ՕՐՑՈՅՑՆԵՐԸ

Ցանկացողները աւելի գինով սատանալու համար դիմում են հետևեալ հասցէով. Թիֆլիս, Գարայակի № 5, Մակար Զէշեանին.

Ե. Հ. 5—15

Լոյս տեսան և վաճառվում են

ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ

ԾՈՑԻ ԵՒ ՊԱՏԻ

1907 Թ.

„ՇԻՐԱԿ“

պատկերազարդ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ պատկերազարդ

ՀԱՐՈՒՍՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ

ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑԸ բացի օրացուցական բաժնից պարունակում է վաճառականական, օրէնսդրական, բժշկական, տնտեսական, ճանապարհորդական, արհեստագիտական, գիւղատնտեսական, կենսագրական, [illegible] տեղեկութիւններ, [illegible] Ազգային ժողով (ֆրանսիական յեղափոխութիւնից), Բաժնետիրութիւն, Սահմանադրութիւն, Ի՞նչ է ազգութիւնը, Յեղափոխութիւնների պատմութիւնը, Տոմարներ, [illegible] Օրենքներ [illegible], Գիտական զուարճալիք, Խնդիրներ, Վիճակներ, Բերմուններ և այլ և այլ հետաքրքիր տեղեկութիւններ։

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԸ պարունակում է ընտիր մտքեր և աֆորիզմներ, եկեղեցական և ազգային տօների պատմական բացատրութիւններ, հայոց ազգային սովորութիւններ, բժշկական, [illegible] տնտեսագիտական, [illegible] տեղեկութիւններ, [illegible] Ազգային քնար, [illegible] Տնտեսական, արհեստագիտական, խորհուրդներ, հետաքրքիր նորութիւններ, պատմական ժամանակագրութիւններ, նոր անեկդոտներ, [illegible] հետաքրքիր տեղեկութիւններ դուրանի և մահմեդական փոքրամասնութեան մասին, [illegible]

Իւրաքանչիւր տարին երեսի վրա կայ մի մի բանաստեղծական համառօտ նոյ և սոցիալ [illegible]

ՏԱՐԵՐԸ մի գեղարուեստական պատկեր է [illegible] «ՈՒՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ» [illegible] «Հայկական դրամներով» (դերբեր), մի նկար, որ կարող է սենեակի զարդ ծառայել։

«Շիրակ» օրացոյցները զարդարված են գունաւոր պատկերներով։

Ցանկացողները մանրամասն բովանդակութիւնը կարող են ստանալ ձրի։

Գինը՝ ծոցինը 20 կ., պատինը 50 կ.։ Գումարով գնողներին ծոցինը 15 կ., պատինը 35 կ.։ Ցանկացողները թող շտապեն, որ պատկերները կարելի լինի ճշտութեամբ կատարել։

Դիմել՝ Александрополь, типографія «Ширакъ» Карапету Апинянъ. Արտասահմանից՝ Alexandropole, Karapet Apinian (Caucase).

4—15 Կարապետ Ափինեան

Ֆրանսիական Ծովագնացական Ընկերութիւն

«ՄԵՍՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ» — «MESSAGERIES MARITIMES».

20-ին նոյեմբերի (3-ին դեկտեմբերի նոր տ.) մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 4-ին, շոգենաւը «La Crimée» [illegible]

[illegible]

1—1

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.

Электропечатня, Типографскаго Т-ва «ГЕРМЕСЪ» Мадатовская ул., № 5